


Stargardt
Uffgale
Zeynay.

)



1903

31 AUG 2007
ԱՐՎԻՎԻ ԿԱՐԱՑԻՑ

ՅԵՂԱԳԻՐ ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ

Օրոշական ժեղ. գաղ.

Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Գ. Ա. Ա. Բ. Շ. Ա. Պ. Ա. Վ.

ՏԵՂՐԻԿ ՄԱՅՐ ԱԹ-ԱԹ-ԱՑ Ա. Լ. Շ. Ա. Մ. Ա. Վ.

1903

9(47.925)
2-17



(47.925)
Հ-17

n 1 SEP 2011

ՅԱԿՈՎՅ ԿԱՐԵՑԻ

Ա.

ՏԵՂԱԳԻՐ ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ

Օխոտակարան Ժ. Պարու



Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ



ՎԱԴԱՐՃԱՊԱՏ

ՏՊՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹԱՋՈՅ Ս. Էջմիածնի.

1903

5168
11
2

13041

Дозволено Цензурою

Дозволено Цензурою 13 Января 1903 г. г. Тифлисъ



Կանոնարկության պահանջման գործադիրությունը
և առ աշխարհական պատճենները պահանջման գործադիրությունը
Հայոց առաջարկության պահանջման գործադիրությունը
և առ աշխարհական պատճենները պահանջման գործադիրությունը

Գործիս հեղինակը՝ տէր Գէորգի որդի տէր
Յակոբը բնիկ Կարնեցի՝ Արզրում քաղաքի Հայոց
Միաբան Ս. Աստուածածին եկեղեցու 15 քահանա-
ներից մէկն է. ապրել է ԺԷ. դարում և նկարագրել
է դէաքեր, որոնց ժամանակն ընկնում է 1622—
1662 թուերի մէջ. թէն նորա գործը Բարձր Հայքի
տեղագրութիւնն է, բայց Արզրումի մէջ պատահած
նշանաւոր անցքերի նկարագրութիւնն էլ չի մոռա-
նում:

Նա յիշում է Օսմանցւոց և Պարսից պատե-
րազմների մասին, որոնք տեղի ունեցան 1586 ից
մինչև 1640 թուականը. նորան զբաղեցնում են և
այնպիսի իրողութիւնները, որոնք Արզրումի Հայոց
կեանքի մէջ նշանակութիւն ունին. առաջին աեղը
զբաւում է եկեղեցիների խնդիրը. նա պատմում է,
որ 1629 թուին Արզրում եկաւ Հալալցի Սանսա
Զէլէպին, որ արքունի մաքսապեա էր, ինքը շատ
հարուստ և բարեպաշտ մարդ. երկու տէրութիւն-
ների պատերազմի ժամանակ նա իւր կարողութեամբ
մինչև հազար գերի աղատեց, թէն Արզրումու բերդի
մէջ Հայոց շատ եկեղեցիներ են եղել, բայց բոլորն

էլ անցել էին տաճիկների ձեռքը, «զարն արարեալ և ամբարանոցը և զ՞ր քակեալ և քաշքայեալ են,» նոցանից մէկն էր և մի սադաշէն գեղեցիկ եկեղեցի, որը մի տաճկի «տուն և սարայր էր.» Սանոս Զէլէպին այդ տունը գնեց և 1637 թուին վերականգնեց եկեղեցին, առջևի մասը քանդելով և տեղը մի փայտեայ ժամատուն կառուցանելով. քահանաներն և ժողովուրդը սիրով միաբանեցան և օգնեցին գործին. «բազում դրամս մասիցին ի դրունս փաշաներացն,» եկեղեցին էր յանուն Ս. Ստեփաննոսի. նորա մէջ ժամերգութիւնը շարունակուեցաւ մինչև 1662 թուականն, երբ Կ. Պօլսից առանձին հալածանք ելաւ քրիստոնեաների դէմ:

Տէր Յակոբը պատմում է, որ :651 թուին Արդգրում եկաւ Վանեցի մի մօլլայ Վանի անունով, որը մի ժամանակ այնտեղ մնալուց յետոյ գնաց Կ. Պօլիս, մոլեռանդ կրօնաւորի մեծ համբաւ ունենալով, Վանին այնտեղ մեծ ազդեցութիւն ձեռք բերեց Բարձր Դրան վերայ. նորա թելադրութեամբ 1662 թուին հրաման ելաւ, որ Կ. Պօլսոյ մէջ «մինչև տասն եկեղեցի Հոռոմոց և Հայոց քանդեալ աւերեցին, և ի դըլուխս ամենայն քրիստոնէլից՝ Ստամբօլայ մինչև ի Թոլսաթ և ի Սեբաստիոյ վիճակն՝ սև գտակ հաղուցին և զիակեղն եասախ արարին:»

Նոյն այդ մօլլայի ազդեցութեամբ հրաման եկաւ Արդգրում, որ բերդի Ս. Ստեփաննոսի եկեղեցին առ ան-

և մղկիթ արինու Այնուհետեւ Արդրումի Հայոց ձեռքը,
որոնք այն ժամանակ մօտ երկուհազար տունէին, մը
նացմիայն մի եկեղեցի բերդի պարսպից դուրս, այն
է Միարան Ս. Աստուածածին եկեղեցին, որի մէջ
1653 թուին կար 15 քահանայ և 10 սարկաւագի
Յառաջ, երբ եկեղեցիների թիւն երկուս էր, քահա-
նաների թիւն էր 30. թէ երբ և ինչպէս եղաւ, որ
նոցա թիւը կլասով չափ պակսեցաւ, աէր Յակոբը
չի բացատրում։

Արդրումի Հայոց վիճակին է վերաբերում աէր
Յակոբը Նկարագրութիւնը, թէ ինչպէս 1653 թուին
գողերը կողապտել են Միարան Ս. Աստուածածին
դարդերն սու անօթները, ինչ իրարանցում եղել է
ծերունի աէր Գէորգ աւագ քահանայի, բոլոր եկե-
ղեցական ուխտի և ժողովրդի մէջ, և թէ ինչպէս
Աստուած օգնել է, որ փաշոն գողերին բռնել է
տռել և դողօնը գանելուց յետոյ նոցա բոլորին
խիստ պատժել է բազմութեան առաջ։

Արդրումի գաւառի պատմական դէպքերից
աէր Յակոբը շատ քիչ բան է հանդէս բերում. մի
անդամ միայն, երբ իւր սրտի ուրախութիւնն է
յայտնում, որ Հայերը, չնայելալ ծանը ձնշումնե-
րին, իրենց հաւատն հաստատ են պահում, նկա-
րագրում է գաւառի ժողովրդի բնդհանուր վիճակը:
Նա ասում է, որ 1643 թուին Կ. Պոլսից ուղար-
կուեցաւ Արդրում Զաֆար անունով «Ժանտաբարոյ

և քրիստոնէից թասիալ» մի մօլլայ, որին յանձնուեցաւ Արդբումի բոլոր շրջակայ երկիրներն աշխարհագիր անել: Զափարն առար դաւտար և կապեաց ծանր խարաճ, և ելից մեծ և փոքր ի թագաւորական դաւտարն.» այդ պատուհասից ազատուելու համար Թորթումի կողմիրի Վարացիք, ասում է տէր Յակով, «յերկուցեալք ի յահէ խարաճին, դարձան յօրէնս Մահմէտի» թէի կրօնափոխութեան երեւոյթներն Օսմանեան տէրութեան մէջ կրկնուել են շատ անգամ և ոչ միայն Վարացի, այլև միւս քրիստոնեայ ժողովրդի մէջ, սակայն տէր Յակովի պատմութեան մէջ նորը այն է, որ կրօնափոխութիւնը զգալի թեթեաւթիւն է պատճառում հարկերին կամ նոյն իսկ ազատում է խարաճից:

Տէր Յակովի տեղադրութեան շատ մասերը գեղեցիկ պատկերացնում են զանազան կենցաղական պայմանները թէ Արգրում քաղաքի և թէ նորա շրջակայ գաւառների մէջ, մահմետական և քրիստոնեայ ժողովրդի համերաշխ և հանգիստ կեանքը խաղաղութեան ժամանակ, երկրի լիութիւնն ու առատութիւնը, վաճառականութեան յաջողակ պայմաններն և հարստութեան պատկերը, փաշաների իշխանութեան և զործունէութեան չափը, կեղրոնական և տեղական վարչութիւնների յարաբերութիւնը, դատավարութիւնն և ոլատահասներն եացն:

Տեղագրութեանս նախապատճառն եղել է հե-

դինակի հարտպատ եղբայրը Մաղաքիս, որին ձայնակցել են և Արդրումի քահանաներն ու սարկաւագները, որոնք, ասում է, «յոյժ թախանձեցին և ես զինդիրս նոցա կատարեցի»:


Յայտնի չէ թէ տէր Յակոբ ում և ուր է աշակերտել. ինքն ասում է, որ տեսել է Արդրում քաղաքի մէջ Սոոյ Մինաս կաթուղիկոսին, որի մականունն էր Քայախ, և «լուաք զդասս և զքարովութիւն նորա» այդ եղել է 1632 թուականից ոչ շատ յառաջ, որովհետեւ տէր Յակոբի ասելով այդ տարին է տեղի ունեցել Մինաս կաթուղիկոսի մահը Երգնկայում: Նորա գրութիւնից երեսում է, որ բացի Ս. Գրքից նորան մօտիկ ծանօթ են Հայոց նախնի մատենագրութիւններն և Հայաստանի աշխարհագրութիւնը:

Տէր Յակոբի նկարագրած երկիրը՝ Վերին Հայք՝ Ժէ դարում իրրե Արդրումի կուսակալութեան աշխարհ ունէր 23 գաւառ, որոնք են՝ 1, Լակզի ձոր, 2, Խորձունեաց երկիր, 3, Ղըզըլջան, 4, Դերջան, 5, Եկեղեաց երկիր, 6, Դարանաղեաց երկիր, 7, Գայլ գետոյ երկիր, 8, Շէռիանու երկիր, 9, Կուկվանցու ձոր, 10, Ծանախոյ ձոր, 11, Խախտեաց երկիր, 12, Ղսովերու ձոր, 13, Իշխանանիստ ձոր, 14, Մամրգան, 15, Վերին Բասեն, 16, Ներքին Բասեն, 17, Ղարա Եազի, 18, Խալի Եազի, 19, Ալաշ-

կերտ, 20, Մանադկերտ, 21, Ապահունեաց երկիր,
22, Վարդոյ և 23 Թաքման:

Այս գաւառների, նոցա կառավարութեան
հանգամանքների և բնակիչների որպիսութեան մա-
սին թող խօսի ինքը հեղինակը:

Ես շատ պարզ և հոգած եմ առաջ անուն կրու-
թի մեջ ունենալու մասին: Ուստի ուստի մասաւարու-
թայ և պատահ ուստի ուստի ամառանի ունենալու մասաւարութ-
թայ առաջ անուն կրութի մասին: Համար ուստի առաջ ան-
ունենալու մասին ըցանութեան ձեռքութեան և մասաւարութ-
թայ անուն կրութի մասին: Զանակ ուստի առաջ ան-
ունենալու մասին գույքի գույքի մասին առաջ ան-



«Բանս է զՓերին Հայոց ի Յակոբ Երիցուէ.»

„Ես նուաստ ողի յետնեալս ի կարդէ քահանայից Յակովը անուամբ, որ եմ ի բնիկ գեղեցիաշէն մայրաքաղաքէն Թէոդուալուէն, որ այժմու գեր ի վերոյ և վարկեան ժամանակս է լի ամենայն բարութեամբ, կրինաքանեցից զիաւելութիւն սորա. զի սա է Վերին Հայք. և է արեւելք. և է շինեալ վասն ամրութեան Հոռոմոց և Պարսից հրամանաւ մեծ կայսերն Սուաբուուայ Փոքուն Թէոդոսի, որ էս ազգաւ Ֆուանկ վերակացութեամբ սրբոց վարդապետացն մերոց փելիսովիայիցն Դաւթի և Մովսէսի աշակերտացն Սահակայ և Մեսրովայ:

Սկիզբն արացուք թելադրութեամբ Հոդուոյն Սբբոյ քաղաքիս, որ բարձր է քան դամենայն եսկիս, և ունի պատուական դաւառք և աւանք, բերդորայք ի Դ. կողմունոն, և իշխող է եշխան սորա բազում տեղեաց, զոթ պատմեցից կարդաւ:

Նախ ի հարաւոյ կողմն են դաւառք զուվելիք ի ձորն Լակով կոչեցեալ. և ունի դիւդուազումս ժաղկաւէտ և խոտալիը, մինչև հա-

սանէ ի Խորձունեաց ձորն և Երկիր. և ընաւ-
կութիւն է Հայոց և քրդաց յեալանի. և ունի
Երկու աղաճանք ջրոյ. որ բազում տեղիս նոքա
լուն աղով, եղով, ընկուզով և մեղրով:

Եւ անտի Երկիրն Խորձունեաց, բազում
գիւղք և գաւառք. այդեստանօք և մրդաւէտ
ծառօք զարդարեալ է և ունի գիւղաքաղաք
զեղի փոքր զղեակ, և է այժմ պարսնանիստ և
և կարի ախորժաճայք, վարդապետաց որբոց
Երաժշտականաց գամբարան և ընակարան. և
կոյ վանք Երկու, այժմ միաբանակեցաց տեղիք,
մինն անուն սուրբ Կարապետին և միւսն սուրբ
կուսին Մարիամու Աստուածածնին. և է անդ
գերեզման Եպիսկոպոսին սրբոյ Խագայ, որ պահ-
պանութիւն է աշխարհին, որ այժմ Հանգոտուն
կոչեն: Եւ Ելանէ Երկաթ և գիւլուլայ թօփի.
և ունի սինոռ մինչեւ ի Բալու:

Եւ անտի է գաւառ մի գեղեցիկ յոյժ, պա-
րսնանիստ, խոտալիր և ջրտէտ, անասնօք և
ոչխարօք ի լի և գեղօրայք Հայոց, որ այժմ
Դըղըլջան կոչեն:

Եւ արեմտից կողմն են գաւառք զարմա-
նալիք, առաջինն Հայք, որ այժմ Դերջան ա-
սեն. և ունի գիւղս բազումս, Հայոց ընակա-
րան. և է Երկիր գաշտաձե, հացալից, տնաս-
նոք, իւղօք և մեղրօք ի լի. և ունի գիւղաքա-

դաք զհագառին առ յափն Եփստատայ, և ունի
վանս Բ. որ է այժմ տեղի միաբանակեցաց, մինն
է անքոյթ ի բարձրաւանդակ տեղոջ, որոյ ա-
նունն Պղնձագոյն անապատ ասեն, և միւսն է
հիմնարկեալ ի որբոյն Գրիգորէ Լուստրոլչէն
եղեալ մասն որբոյն Կարապետին. և միւս բարձ-
րագոյն եկեղեցին սուրբ Գաւիթ անուանեալ
բարձրակառոյց խաչերով, և է գամբարան ոըր-
սոց վարդապետաց ի պահպանութիւն Երկրին
տյնմիկ. և է անդ գերեղման որբոյն Աթենադո-
րոսի Յ, ու յաւուր Համբարձմանն ուխտ լինի, և
բազում ախտաժետաց վարատումն լինի շո-
նորհօքն Քրիստոի և սուրբ վկային նորա:

Եւ գնացեալ հասանէ Երկիրն յնկեղեաց
դաշտաձև և լայնանիստ. և ունի գիւղք և ա-
ւանք բազում, և ունի վանս ի Գ. գմբեթա-
յարկք և հրաշալիք տեսողացն. և է անդ գամ-
բարան որբոց վարդապետացն Արիստակէսի և
Մեծին ներսէսի ի Թիլն աւանի. և է տեղիք
չարչարանաց որբոյն Գրիգորի մերոյ Լուսաւոր-
չին, որ այժմ Տղայ Լուսաւորիչ կոչեն գեղին
այնորիկ, զի Տրդատ արքայն անդ ետ Երկոտա-
սան չարչարանք որբոյն Գրիգորի Բ. ամ. և յետ
Բ. ամացն ապա ուղարկեաց ի Խոր-Ալիրապն,
որպէս գրեալ կայ լիակատար պատմութեանն
իւրում: Եւ ունի քաղաք մեծ զնդնկայ, որ լի է

ամենայն բարութեամբ, բամպակօք, այդ եստունօք և մը գաբեք ծառօք։ Եւ կայ ի մէջ քաղաքին այժմ և եկեղեցի քահանացինք և ժողովրդեամբ լի, և է գամբարան սրբոց վարդապետացն Յոհաննէս Պլուտին, որ Խուսաւորչին Անձինքն է ասացեալ, և Կիրակոս վարդապետին, որ Արևելքն է ասացեալ, Կեղեցի Դուկաս վարդապետին, որ զշառոմայեցոց տօմարն և այլ բաղում ոտանտարսն է շաբադքեալ, և Կիլիկիոյ Մինաս կաթուղիկոսին, որ մականուամբ Քառասին կոչւիլ. զի տեսաք աչօք մերովք և լուաք զդասս և զքարազութիւն նորա ի քաղաքս Արշ զբում. և գնացեալ Եղնկայ էառ վախճան ՈՉԱ. թուին և Եղեալ կայ ի զուռն սրբոյն Սարդոսի հետ մեծին Դուկասու, որ յար և նման էր սրբոց հայրապետացն աստուածաբանութեամբ և սրբութեամբ լի։ Եւ կայ ի վերայ ճանապարհին վանք մի հռչակաւոր Միաւոր սուրբ Կարապետ անուն առ ստորոտով լերին մեծի, որ Զարտաւու կոչեն, որ գնացեալ սինօռն հասանէ մինչեւ ներ Դարահիսարն, որ է Կողմնիայ։

Եւ անտի յառաջ գնացեալ ի միւս կողմն հասանէ Երկերն Դարանաղեաց, որ ունի գիւղք և աւանք և բերդ ամուր և անառիկ ի վերայ գետոյն Եփատայ. զի լնքն Տրդատ շինեաց և եղ անդ զԱշխէն տիկինն և զքոյթ իւր զփուրս-

վիզութան։ և է յոյժ վայելուց և մըգարեք փոքր ըիկ քազաք և ընակսւթիւն աղդիս Հայոց։ և ունի պայծառ եկեղեցիք և վանորայք։ և լինի յոյժ ախորժ և զարմանալի պանիք, որ ի Ստամպու և ՅԱՐԳՐՈՒՄ փաշային աղերո կումատուցանեն։ Եւ անդ է լեառն Սեպուհ դամբարան Լուսաւ որչին մերոյ և որբոյ կուսին Մանեայ։ Եւ անդ կախեալ կայ յօդն Հաւհալի և թուրն Տրդատայ, զսր խաչ ձեւացոյց սուրբն Գրիգոր։ որ գնացեալ արժանաւորքն տեսանեն դնա։ որպէս և Պլու զ վարդապէտն շարադրեալ է յերգո շարականին ասելով «զէնն արքայական սպանմանն գործի կենաց արքային կենաց»։ Եւ ի մէջ ձորոյն է գերեզման որդւոց և թոռանց Լուսաւորչին ի Թորդան։ և կայ անդ վանք մի Աւագ, զոր սուրբ առաքեալն Թագէոս հիմնարկեալ է։ Եւ յորժամ էջ սուրբն Գրիգոր զառ ի վայր անհուն լերինն ի վերաց ծնկացն, որ այժմ Գոհաւնամ ասեն, զի կամէր այնպէս գնալ ի սուրբ յերուսաղէմ վասն թողութեան հօրն իւրոյ Անակայ, և յորժամ էհաս ի ձորն, ոչ հանդուրժեաց Միածինն Աստուած ընդ չարչաւանս ծառային իւր, այլ առաքեաց սերորէս դի ոչ ետուն թոյլ, այլ առեն թէ անհնար է արդարանալ հօր քում, ի զուր մի՛ աշխատիր, համարեցաւ քեզ Աստուած արդարութիւն։ և անդ շնու-

եաց վանք մի յանուն սուրբ Սեբովլքէիցն, ուր
ետես. որ է միաբանակեցաց տեղիք մինչև ցայ-
սօր: Եւ գնացեալ հասանէ մինչ քարածորն Ակ-
նայ և Արապկերու: Եւ յետ կոյսն ունի Կամախ
Գ. գաւառո՞ Հասանովայ, որ բազում դիւղք
կան, և Արմտաններն, որ գնացեալ հասանէ
մինչև ի Տիւրիէ, և միւս կողմ՞ն է Դուռուչան,
Երկիր Խոր և թաւամայրի, որ ի գրոց Աղնցիք Յ
ասին: Աստի էին և սուրբքն Բռնտռատիոսեանքն,
որ գնացեալ ի Սեբաստիայ մարտիրոսացան վասն
անուանն Քրիստոսի:

Եւ անտի շրջեալ դէպ ի կողմ՞ն հիւսիսոյ
են գաւառք զարմանալիք, առաջինն է Երկիրն
Գայլ գետոյ⁶, որ ունի գիւղս բազումս, ձորա-
մէջո, մայրիս և անտառս յոլով, և ունի գիւ-
ղաքաղաք զկարմըի, և ընակիչք Երկրիս Հայ և
Տաճիկք են. և աստի Ելանէ Գայլ գետն և դի-
մեալ ի յարեմուտս գնացեալ հասանէ ի Նիկե-
սար քաղաքն:

Եւ յետ այնորիկ Երկիրն է Շէռյիանու. բա-
զում գիւղք և աւանք, և ընակիչք Երկրիս Հայ,
բազում Հոռոմք և Տաճիկք են, և է յոյժ թաւ
մայրիք, սար և ձոր անտառախիտ, և ունի բերդ
զնէռիան, և գնացեալ հասանէ մինչև ի դաշտն
յԱշխարհու:

Եւ անտի շրջեալ ի ձորն կուկվանցու, որ

ընակութիւն է Հոռոմոց և ունի գիւղք և աւանք և վանորայք բազումք, և ունի բերդ անառիկ գլուխիվանց, և ունի սահման մինչև Սև ծովն մեծ, որ է Պոնդոս:

Եւ անտի ուղիղ ի կողմն հիւսիսոյ ձորն է Ծառախոյ. ունի գիւղք և փոքր բերդորայք, վանուսայք և հրաշալի անապատք թագաւորաշէնք Հոռոմոց, որ ընաւ կին և անմօրուս մարդ ոչ մտանէ անդ. որք այժմ կան անդադար ի փառաբանութիւնս Աստուծոյ: Եւ ունի քաղաք զիւմուշանսան, որ է վայելուչ և մրգաւէտ վայրք. և ընակիչք սորա Հայ և Հոռոմք բազում, և կայ եկեղեցիք հրաշալիք Հայոց և Հոռոմոց. և ելանէ առափ սոկի և արծաթ ընտիր բազում. ելանէ նաև պղինձ, արճիճ և երկաթ բազում, որ Արգումում և շրջակայքն նորա լնուն. ունի ձորս այս սինոռ մինչև ի Տրապիզոն առ ծովափին:

Եւ անտի շրջեալ ի միւս կողմն հիւսիսոյ է Երկիրն Խախտեաց, որ ունի բազում գիւղք և աւանք և վանորայք. և է այժմ ամենեքեան միաբանակեցաց տեղիք և վարժարան աստուածաբան վարդապետաց. և է սա քաղցր և համեղ Երկիր, և Հայոց ընակարան, և ունի բերդ մի պարսպաւոր անառիկ և վերայ բարձրաբերձ վիմի հաստատեալ, որ այժմ Բաքերդ ասեն. և անցանէ գետն ձորոխ ընդ մէջ քաղաքին, և եւ

լանէ ձկունք անթիւ և զանազան. և են ընտելէք ոսրա մարդասէրք և հիւրբնկալք, քրիստոնեայք, և ծաղրերես քահանայք և տօլվաթաւորք. և ունին այժմ եկեղեցիք Դ. զարմանալի տեսօղացն, որ կան անդագար և փառարանութիւնո Քրիստոսի Աստուծոյ: Եւ է երկիրու այս հացալից, ջրաւէտ, խոտալիր, ոչխարօք և անտանօք ի լի, իւղ և մեղք սպիտակ և անթիւ, որ հիանալի է տեսօղացն. և ունի սինօռ մինչև ի Հոռոմոցն և Սե ծովու յափն և Ըսպիրու:

Եւ անակ հասանէ ի ձորն մեծ և անհուն, որ ունի դղեակ մի պարսպաւոր շինեալ ի վերայ ձորոխ գետոյն, որ այժմ Ըսպիր տաեն. և է ուա պարոնանիստ, և ունի դիւղս և մազրայս Գձ. և մայրիս յոլով, է և ձորն այգիք անթիւ և ծառոց ոլտուղք յոլով հոտով և համով. և ունի վանք մի հըաշալի անուն սրբոյն Յովհաննու. Մկրտչին կառուցեալ, որ է այժմ միաբանակեցաց տեղիք. և ամենայն տարի սուրբ Խոչվերացի տօնին դնան անդ ուխտաւորք բազումք: Եւ ունի ի գլուխս լեռանցն յեայլաներ յոյժ խոտաւէտ և ջրաբուխ, որք բազում հօտք ոչխարաց և անասնոց ճարակաւորեալ. լինի իւղ և մեղք անթիւ. և ընակիչք երկրին ըովանդակ Հայք: որ գնացեալ հասանէ մինչև ի գեւզն Խուտեցուք, և ունի վանք երկու, և այլ եկեղեցիք

ըազում, որ այժմ տւերեալ և ամայի կան ի
ձեռու Տաճկաց:

Եւ շրջեալ միւս ձորն Խշանանիոտ, որ
ունի ըազում գիւղք և փոքք բերդայք և վա-
նորայք ի գլուխս լերանց. և ունի ըազում յեայ-
լանի ակնաբուխ, անասնոց և խաչանց վայե-
լուց վայրք. և ի մէջ ձորոցն է այգիք և ըութաս-
տանք և պտուղք ծառոց զանազան և անթիւ,
և դինի անչափ ցոլով և քաղցրահամ, որ մինչեւ
է. տարի այնպէս անապական է, որ թուի թէ
այսօր հարեալ է ի հնաձանէ, որ ոչ սրտի գողումն
կամ գլխացաւութիւն բերէ, այլ ախորժէ ըմ-
պողացն: Եւ ունի ձորս այս բերդո անառիկս
զթորթում, որ պարոնանիստ է և իշխող է մինչեւ
ի բերդն Ազքակ առ յափն ձորով գետոյն: Եւ
լինի Թորթումս այս տանձ, ևս առաւել խնձոր
զարմանալի հոտով և համով, որ հիացեալ տա-
ցեն փառս Առառուծոյ: որ մէկն այնչափ մեծ է,
որ ԲՃ. գրամ կշռէ, որ է Ա. Նուկի, և է գունն
կարմիր կամ սպիտակ յոյժ, որ հանապաղ ի
Ստամբոլ և ի գրունտ մեծամեծաց ընծայ մա-
տուցեալ լինի, որ անուամբ շահալմասի ասեն:
Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք Ար-
քաց ի գիւղն Խախու, Ողկ և Խշան, որ յար և
նման ոչ գոյ նոցա, բայց թէ մի միաժամ ոտոք
Սոփի ի Կոստանդինոպոլիս: Ցը Ինս ընտկիչք

7 / XI - 1922

Ա. ՄԱՍԻՒՀՅԱՆԻ Ա. Ա.

երկրիս կէսն Հայ ազգաւ և կէսն կըօնիւք Վրացի,
բայց Հայի լեզուաւ խօսէին, իսկ ի բաղմա-
նալ Հտդարացոցն ի ժամանակս մեր ի թուա-
կանիս ՈՂԲ. ամին եզեւ հրաման մեծ կայսերէն
Ստամպօլայ ի վերայ մօլլայի միոջ, որ էր յոյժ
անուանի և առաջակայ էր քաղաքիս Արգրու-
մայ և փաշաներաց՝ Զաֆար անուն ժանտարա-
րոյ և քրիստոնէից թասիպ, յաշխարհագիր առ-
նել զբոլոր շրջակայ Երկիրս Արգրումայ: Եւ ե-
լեալ արար գաւտար և կապեաց ծանր խալաճ,
և ելից մեծ և փոքր ի թագաւորական դաւ-
տարն. և Երկրիս Վրացիքն ամենայն յերկու-
ցեալք ի յահէ խարաճին գարձան յօրէնս Մահ-
մետի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հա-
ւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և ազօթիւք
սուրբ Խուսաւորչին: Եւ ձորս այս յոյժ բարեաւ
լի է. զքաղաքս մեր Արգրում, Բասեն և շրջա-
կայ գաւառքն ամենայն սոքա կուլնուն զին-
եաւ, խաղողով և ձիթապաղով և ամենայն մըր-
դով:

Եւ անտի շրջեալ ի կողմն յարեելից է գա-
ւառ մի մեծ և բազում գիւղք, և ընակիչք
Երկրին Հայք և Վրացիք. և ունի բերդ մի բար-
ձր և անառիկ, որ այժմ Մամրվան կոչեն. և
է ի մէջ բերդին վանք մի փառաւոր, որ յանուն
որբոյն Գէորգայ է կառուցեալ, որ այժմ Ուլէթ

ասեն։ և է լինքն պարոնանիստ և հացալից երակիթը, և կարի խոտաւէտ, և ակնաբուխ սառն ջրոց յայժ։ և է ի մէջ մայրի անտառացն որ փիճիր ասեն, և Ազատմայրի կոչեն, որ ոչ բուկիզըն տեսեալ ոք կայ և ոչ ծայրն հատեալ։ զի ասեն թէ գնացեալ հասանէ մինչեւ ի Կովկաս լեառն ի դուռն Ալանաց ի Կառըիական ծովն, որ է Կիլան։ Եւ երկիրս այս լի է պաճարեղինօք և ամենայն բարութեամբ։ և ունի սինօռ մինչեւ Օխտիք քաղաք, և միւս կողմն մինչեւ ի Բասեն։

Եւ անտի շրջեալ ուղիղ գէպ յարեելո, է երկիրն Վերին Բասենոց բազում գիւղք և աւանք։ և ունի ծաղկաւէտ լերունք ջրալից և տուն հացի, անասնօք և ոչսարօք ի լի, իւղ և մեղք իրքեւ աղբիւր, գեղեցիկ և վարժ քէհլան երկվարք բազում, որ տեսողացն հիացեալ փառս տային Աստուծոյ։ Նաև գեղեցիկ շինեն դոյլ և կուժ վայտեայ զանազան, յոյժ օգուտ և ախորժ է ըմպոզաց ջուր ի նմանէ։ և են ընակիչք երկիրին Հայ, և Թուրք սակաւ։ և ունի մեծ բերդ պարսպաւոք ի վերայ վիմի հաստատեալ, որ հայ բարբառով կոչեն այժմ Դորոնք, և թուրք բարբառով Հասան-Ղալա կոչի։ անցանէ դեան Արար ընդ դուռն քաղաքին, և է առ յափին ջըրոյն ջերմ ջուր, որ յոյժ ցաւոց և ախտաժե-

տաց օգտակար է մտելոցն ի ջուրնու և ելանեն
ձկունք անթիւ և ազգի ազգի համեղ ճաշակու-
ղացն; Եւ է բերդս այս մեծ պարոնանիստ և
հեծելօք ահաւոր խմբող ի պատերազմի; Եւ ունի
վանք հռչակաւոր և գմբէթայարկ շինեալ ի մօ-
քէն Մագիստրոսին յանուն սուրբ կուսին Մա-
րիամու կառուցեալ, որ է այժմ բազում միա-
բանակեցաց տեղիք, և ունի թեմ երկոտասան
դաւագանի; Եւ ի գլուխ լեզին վանքիս այսո-
ւեկ բուսանի զարմանալի ծաղիկն համասփիւռ-
ձի. տարին մի անգամ. որ թէ հանդիպեալ ես
դու համասփիւռի պատմութեանն, գտանես ի
լեզինո այսմիկ որ Գըունք՝ կոչի; Եւ ի հարաւոյ
կողմն ի մէջ ձորակին ունի բերդ մի փոքրիկ, որ
հասեալ է մինչև ի յօդն անահ ի մերենայից, որ
Յաւնիկ կոչիս անտի էր ճգնաւորն Գառնիկ, որ
ամփոփեաց տեսլեամբ զմարմին Լուսաւորչին
մերոյ ի Թողդան. և ունի սինօռ Բասենս այս
վերին մինչև ի Զարափիանան և ի Կազզուան և
ի Թարդմանն:

Խոկ Ներքին Բասենն է պարոնանիստ և ու-
նի դիւղաքաղաք դիոքտանան առ յափն Երասխայ,
և ունի բերդ Ջիւին, Մէֆէնկերտ և Կէչէվան. և
է ի մէջ բերդին գերեզմանն Խաչատուր Կեչեռա-
ցուն; Եւ այլ բազում գիւղք ունի և մայրիք,

որ դնացեալ հասանէ մինչև իւ կազմ, ի Պարտէպ
և ի Մօղանլուն:

Եւ անտի ի լեառնակողմն հարաւոյ են դա-
ւառք երկու, որ ասեն Դարա եազի և Խեալի
ետղի. Են ընակարան և յեալյանի Քրթաց, որ
հանապազ վրանաւ Կեդարու շրջին ոչխարօք և
անասնօք ի լի. և դնացեալ հասանէ մինչև ի
լեառն Սուեկաւէտ: Ի գլուխ լերինն է գերեզման
որբոց Սուբեասեանցն, որ ամենայն տարի յա-
ւուր կատարման սացա լզինէ աղբիւր իրբե ըզ-
պրոպատիկէ աւազանին, ով որ հանդիպի
նոյն օրն, բժշկութիւն լինի ամենայն ցաւոց և
միարատումն ախատժէտաց, որ այժմ Քօսա-
տաղ ասեն:

Եւ ի սաուոտ լերինն է երկիր մի մեծ և
գաշտային, դիւզք և աւանք բազում, և բեր-
գորայք անառիկք առ ստորոտով լերանց մօրն
Աստիսոյ, և ունի բերդ պարսնանիստ որբոցէ
որդիք՝ Շառ շիկ, Պայտազիտ, Խամուր դալան և
Ուեադին ի դլուխո դաշտին, աստի ելանէ մեծ
մասն նվիրատայ, և քուքուրդ բազում, և դնու-
ցեալ ի մէջ դաշտին, և լինի գետ մեծ և ան-
հուն: Եւ երկիրո այս ի դրոց Վաղարշակերտ
կոչի, և այժմ Ալաշկերտ ասի. և է այժմ խո-
տաւէտ, ջրալից և հովիտ անսոսունք և հօտք
ոչխարաց իրբե զաստեղս երկնից սփուեալ կան

ընդ երեսու գաշտին. իւղ և հաց քազում, աղդի
աղդի գեղեցիկ, և տաճիկ ծիան պարոնաց և վա-
շաներաց հեծանելի: Եւ իշխան երկրիս է մեծ
պարոն և քազում զօրաց տէր. և ունի ոխնու-
մինչև շրջապատն Մասիսոյ երկրին նրէվանայ,
և միւս կողմն մինչ Արտազ, որ է Մակու և Յա-
պաղան: Աստ եկեալ դէմ թագաւորն Տրդատ
ամենայն զօրօքն Հայոց, որ եկն ի Վարայսարու-
կաթուղիկոսութեան կարգօքն հանդերձ Անկեղ-
տան իշխանաւն: որ ունեին ընդ իւրեանս ըզ-
մարմին որբոյ Կարապետին և Աթանակինեայ
սուրբ հայրապետին, որ եկեալ հանգուցին ի
Տարօն, և է այժմ մեծ վանք հուշակառ որ շինեալ
ի վերայ նորա:

Եւ անտի դայ հաստանէ ի քաղաքն Հայոց
Մանակիերտ դաշտաձե, պարոնանխստ: աստ
արար առանձին ժողովք Հայոց կաթողիկոսն
Ցոհան Օձնեցին ձժէ: թուին, որ ի ժամանակս
Եզրի կաթուղիկոսին այլայլեալ և խանգարեալ
էր, վերստին հաստատեաց զնիկիական դաւա-
նութիւն և ուզդեաց զամենայն կարգս և կա-
նոնս: ձեռնառութեամբ իշխանին Արծրունեաց
Վարդապատրիկին զաղգոն Հոռոմոց, որ եկեալ և
անաւորեալ էին յերկիրս Հայոց, զամենեսեան
հանեաց և աքսորեաց տամրք և ընտանեօք մին-
չե առ յափն Պանտոսի, որ է Սև ծովն: Եւ ունի

ըերդ սրբատաշ, մեծ և պարսպաւոր, եկեղեցիք
և վանորայք հրաշալիք տեսողացն, զիւղք և
տւանք բազումք խոտալիք և ջրաւէտ, հօտք և
անասունք բազումք դէրք և գեղեցիք և վարժ
երիվարք, և ծուկ զանազան. և է սա քաղցր
երկիք և բնակարան Հայոց և Մարաց և ունի
սինօռ մինչ ի Արճէշ, Խլաթ և Արծկէ:

Եւ անտի գայ Երկիքն Ապահունեաց պա-
րոնանիստ որ այժմ Խնուռ տսեն. և ունի փոք-
րիկ դղեակ մի պարսպաւոր, ունի զիւղք բա-
զումք հացալից և խոտալիք, և հովիտք բազումք
ոչխարաց, իւզ և մեղք իրոք զջուր առատ, և
ունի աղբեւր աղի, որ իրոք զառու հոսի. քա-
նի որ պիտոյ է, և կալս և ի փոսս թողուն, որ
արեգակն հայեցեալ չորացուցանէ. իրոք զցոր-
եան ժողովեալ, դարս և կուտակս առնեն և
վաճառեն. զոր բազումք զօրաց թոշակ լինի.
ապա թէ ոչ պիտոյանայ, թողուն որ գնացեալ
խառնի Եփրատ գետն: Եւ առաի Ելանէ արապի
ծիան վարժ և քէհլան. և բնակիչք երկրիս Հայք
բազումք և Քուրդ. և ունի սինօռ մինչեւ ի
Զարբհօր ի խառնուրդս Մուրատ գետոյն, որ է
Եփրատ:

Եւ անտի է գաւառ մի փոքրիկ, որ այժմ
Վարդոյ տսեն. և ունի զիւղք գեղեցկաշէնք
Հայոց, և Քորդաց յեայլանի և անդեայք բա-

զում, իւղ բազում, և ամենայն բարութեամբ
լի, և ունի սինօռ մինչի վանս Գլակայ սուրբ
Կարապետի, և միւս կողմ՞ն մինչեւ Երկիրն Ման-
դակունեաց, որ այժմ Գինճ անուանեն:

Եւ կայ յայս կողմ՞ն Երկիր մի մեծ և լեռ-
նային սառնասուն, անփայտ և ձմեռնային,
պարոնանիստ մեծ, որ այժմ Քաքման ասի. և
ունի զիւղք և աւանք բարում, և Քրդաց յեայ-
լանի, որ ամառն վրանաւ Կեղալու շրջին, և
ունի ազրիւը ազիւ զանազան և անթիւ ակունս
ջրոց բղիսելոց սառն և բարեհամ, որ տյժմ Բին-
դու ասի. ու գետն Սրազ ի սորա լերանցն ե-
լանէ. և գնացեալ իջանէ ի մէջ դաշտին Բա-
սենոյ. խոտ երկիր անապական իրսկ զջուր,
անսասունք և ոչխարք մեծամեծք և գեղեցիկք,
քէհլան ձիան բազում, և ունի սինօռ մինչի Բա-
սեն, Արզում և Կեղի և Լակզի:

* *

Այս է թեմ և վեճակ՝ Արզում նստող
վաշային կերուածքն 8. զի ամենայն շրջակայ ըեր-
դորայքու և դաւառքու, զոր կարդաւ պատմեցի,
հուքմի և հրամանի ներքեւ սորա են, զի ոչ ոք
կարէ կեալ ընդուէմ հրամանաց սորա ոչ պա-
րսն, ոչ իշխան կամ սուպաշի կամ դատաւոր,

այլ հնագանդ ամենեքեան+ և թէ լինի ոք, որ
խոտապարանոցի, առ ժամայն որոյ ճարակ կու-
տայ զինքն և զիւշայնքն: Եւ թէ լինի ոք մէկ
հայ կամ Թուրք կամ շենական Քուրդ կամ զիւ-
ղորէից աղայ և գանգատ գան, առ ժամայն կու-
տապանանէ կամ իւր գաւառէն կուհանէ և ի
ըերդէն կուվանէ, և զիշխանութիւնն այլոց կու-
տայ, և կամ կութալանէ կաշառօք զինքն: ոչ
ոք կարէ ընդդէմ հցամանի նորին կեալ: կամ
կումահացուցանէ կամ կուկեցուցանէ, կուդէ
մօլլայ լինի, կուդէ դատաւոք, դատաստանու-
կուդատէ և ի կենաց կուհանէ:

Եւ իշխող է սա մինչև ի Բալու Համթայ
փաշալին կերն, դէպի արեմուտս մինչ ի Թոխաթ
և ի Սեբառափոյ փաշային կերուածքն, և ի հիւ-
ոիսոյ կողմն մինչ ի Տքապիդոն և Ալոց խոյ փա-
շայի կերուածն, և արեւելից կողմն մինչև ի Կարս
և Կաղզվան, և Ալաշկերտու Երկերն, մինչև ի
Վանայ Ճովն, մինչև ի Մշու Երկերն, մինչև գայ
հասանէ ի Գնջան Երկերն և Իեզի, ոք սա շըջա-
պտտեալ հասանէ կըկեն ի Բալու:

Այս է սինոռ և կերուածք փաշային
մայրաքաղաքիո Սըզբումայ: Եւ ունի սա ընդ
ձեռամք իւրով իսպահիք, զիւզօքէից տեարք,
ենկիչարիք և ըերդորէից սրահապանք թու-
գաւորական, զուլ ու ծառայ տամք և տե-

դոք. որ գըեալ կայ զանուանս նոցա ի զը-
րանն արքունի, որ հանապաղ օլօֆայն և հացն
կուտեն և՛. ողի, թող զՔշգաց պարսնայքն,
որ առանց գըի և թոշակի են, և փաշային հետ
ըերեալ զօրքն, որ ոչ են մնացական, այլ յոր-
ժամ փաշան իւր տեղացն փոխէ թագաւորն,
առժամայն ինքն և իւրայինքն ամենայն ելանեն
ի քաղաքէն յայսմանէ: Եւ թէ մեծ պատերազմ
լինի, թագաւորի հրամանաւ իւր կերուածքովն
ամենայն ձ՛ն. Թուրքի ձիւուր ելանէ քաղաքէս.
ապա այնպէս բուռն և ստատիկ հրաման ունին
0սմանցեք, որ մէկ մտտ գիր ուղարկեն, տասն
օր չի յամենար, իւր մօտն գտանել պարտին
թէ պարսն և թէ գաւառաց տէր. և կամ թէ
թագաւորն և իւր վէղերն ի Սաամպօլայ գիր
կամ ամը ուղարկեն, քանի մեծ փաշայ լինի և
իւրն սիրական, առժամայն վաղվաղակի ելանէ
ըերդէն ի դուրս, ոչ կարէ մէկ սահաթ յամե-
նալ: Եւ թէ քանի որ լաւ և խաղաղասէր փա-
շայ լինի, մէկ կամ երկու կամ երեք տարի մը-
նայ, այլ հնար չկայ, թագաւորն կամ վէղերն
մանդուլ կանեն և ուրիշ փաշայի կուտան քա-
ղաքն. ապա թէ չար և ժանտ լինի փաշան, և
անողորմ կողոպտէ զերկիր, և իրաւունս ոչ տայ
առնել, չորս հինգ Հայ որ գնան գանդատ ի
Սպամպօլ, վաղվաղակի զգլուխն կուկտրէ իւրն

և խորհրդակցին իւրոյ ծառայի արդարն ընդ-
տմբարշտին, որ ահարեկեալ լինին զօրքն և պա-
րսնայքն ամենայն, և տայ զփաշայութիւնն յե-
տին ծառային իւրոյ թագաւորն. և ամենեքեան
հնաղանդին նմա, զի չունի սահման, որ օճախ
ունենայ կամ իշխանութիւն որդոցէ որդիո տալ,
այլ ում որ իւրն առաջ է շնորհո գտեալ և
սպասաւորեալ է թէ Վ.քացու զաւակ է թէ Հոռ-
մի կամ Հայի կամ Առնասութի, նմա տայ զփա-
շայութիւնն: Ապա չէ քրիստոնէից կամ Հայոց
նման, որ վքացեալ առիցէ, թէ ես պարոնի
որդի եմ, և առիւծարար ընդդէմ գառնայ թա-
գաւորին, այլ մերկապարանոց, կամ իշխանք և
բէկարբէկիկ հնաղանդին թագաւորին:

Այսպիսի կարգ և սովորութիւնն է Օսմանցւոց
և Պարսից մահմետականաց թագաւորացն: Զի ի
Ժամանակս մեր, որ տեսաք աչօք մերովք ՈՀ.
թուէն ի վեր, տարի վերայ տարւոյ առաւել
մեծացան և վարժամացան ընչերք, զօրացան
հեծելօք և բազում քաղաքս և կղզիս առին ի
Ֆուանկաց, Ռւսուսից⁹ և ի Պարսից, յարևմուտս
մինչեւ ի Կրիտէս կղզին առին և տիրեցին. այս
1.՝ ամ է, որ դեռ ևս պատերազմի է ընդ թու-
ժին ¹⁰ Վանատիկայ և Ջանայ զմեծ բերդն, որ ի
Կրիտէ, անթիւ մարդով խաղնայով ելից, և ինքն
ոչ նուազի մարդով և դրամով. զի այս Հայոց

աշխարհէս մէկ մարդ Թուբք գեռ ևս ոչ զնացեալ է ի պատերազմ։ և թէ մէկ մարդ որ անկանսի ի մէջ պատերազմին, ի Ստամպօլայ առան տեղ կուզրեն։ և այլ բազում կզզիք տիրեցին մինչև ի Թօնուս և ի Զաղայիցն, ի Հարաւոյ կողմն յեղիպտոսէ մինչև ի մէկ ամսէն ճանապարհ դէսի Հապաշտան տիրեցին և անտի մինչև ի յնամանու Երկիրն, ուր զահֆան կելանէ, և զնացեալ ի Մուխայ, հասին Մաքս, Մատինան։ Արակիստան և նամատունն ըովանդակ մինչև ի Բաղտատ քաղաք և ի Հնդկաց ծովն ի Բարպայ Բանտար քաղաքն իւր փաշային ձեռքն է։ և ի Հիւսիսոյ կողմն մինչև ի Լեհաց Երկիրն Թօնայ գետի Եզերքն ամենայն Մաճարք ևս հարկատու արարին։ Կաֆայու Երկիրն և Թաթարիստան ըովանդակ մինչև Ուռուսի թերդն Աղախու առին և տիրեցին, նաև Սև ծովու Եզերքն ամենայն, որ զնացեալ հասանի ի քուն Վրաց տուն։ և առին զՊաշխալուին (sic) թագաւորի քաղաքն և տիրեցին մինչև ի Թիֆլիզու սինոուն, և ի արևելքց կողմն Սխլցխայ Երկիրն, Զլտրոյ և Նիւակիվանայ Երկիրն, Անի քաղաքն իւր թեմովն մինչև ի գուռն Երէվանայ։ և միւս կողմն Վանայ Երկիրն ամենայն մինչև ի Խոյ և ի Սալմաստ և ի Զուլամերի, և Հագարացուոց Երկիրն ամենայն Մոկաց և Ստանոյ գաւառն և

ամենայն Քրդստան, Առողեստանեաց Երկեքն ամենայն մինչև ի Շահը ազգու քաղաքն իւ ը լիաշային է:

Այս ամենայն անհուն աշխարհացու ախեցին, որ իբրև զձու ի ձեռին ունի թագաւորն Ստամպօլայ մեծ կայսրն զի տիրեալն ամենայն կարող է առանց բերդի պահել, մէկ մատ գրով կամենայ կուկեցուցանէ, կամենայ կումահացուցանէ: Զի ոչ Դղլպաշ և ոչ այլ թագաւոր կարէ պատերազմաւ կալ ընդդէմ սորտ: Զի ըստ Աստուածաշունչ զըսց պատմութեանցն որ գրեալ կայ, թէ յերուսաղէմայ Երկիրն Երկոտասան թագաւորութիւն ըաժանեաց, լոկ դա մէկ փոքր փաշայի է տուել: Եւ այժմ ձն թագաւորութիւն ի ըռին ունի մեծ թուըքս այս. ոչ թէ զովելով պատմեմ զայս, այլ արտասուելով և աւաղելով գրեմ, յիշելով զսոպու և զըսց կարդ և զվարք զօրացն Հայոց, որ անհնազանգը Եղեն թագաւորաց և հայրապետոց, զի արտուղի զնացին և ամբարտաւան շաւզօք շըջեցան, մինչ որ անբարկանալին Աստուած խեթիւ հայեցաւ, և ներողութեամբն Աստուածոյ թագաւորեցին սոքա. որպէս առաքեալն Պօղոս գրէ թէ հեթանոսք օրէնս ոչ ունին, ընութեամբ ըստ օրինացն շարժին, նմանապէս նոքա, հնազանգ լինելով փոքրն մեծին,

առաւել զօրացան։ զի որչափ զազեր և անօրէն
գործը կայ, որ քրիստոնէից խոտելի է և պար-
սաւելի, զայն սոցա օրէնք և գործելի է։ զի
ցեղ ու ցեղ և ազգի ազգի սոււտ պատճառաւ
հարկապահանջութիւնն և կեզեքելն անասելի է
և անպատճելի, անողորմ առնուլն ի քրիստո-
նէից։ զի ինձ այսպէս թուի, թէ Դանիէլ վասն
սոցա մարդարէացաւ վասն չորբորդ գազանին,
թէ ահեղ էր և զարմանալի, ուտէր և զմնա-
ցեալսն առ ոտն կոխէր։ Մահմետն ի մեր թուա-
կանին կ տարին եղեալ է։ և այսչափ տարիք
ուտեն և զազգս քրիստոնէից առ ոտն կոխեն
ամենայն կողմանց։ զի որ էհարն, նոյն ինքն բը-
ժշկեսցէ և միրկեալ ազատեսցէ Տէրն Յիսուս Քը-
րիստոս զազգս Հայոց ի ձեռաց սոցա ամէն։

* * *

Եւ ես դարձայց առաջիկայ պատմութեանո
թէողուալոլոյ բերդիս զգնդաձեւ բոլորակու-
թիւնո, զմուան և զելն այժմուս, զգեզեցիկ ա-
մառն, զցրտառառոյց ձմեռն, զբնակիչք քաղա-
քիո, թէ ոլքան է և կամ ոլ ոք են ժառան-
դողք սորա։

Նախ և յառաջ բերդս այս պարսպաւոր է,
և մէկ քան զմէկ բարձր աշտարակ, և ամենայն

սպուռնքն խոսրովային է, որ է շէշխանայ, և մեծութիւն սորա երկու կանոն սաղմոսիւն հազգիւ կու շրջապատի, և ունի չորս դուռն՝ արեւելք, արեմուտք, հիւսիս և հարաւ: Նինուածք, որ ի մէջ սորա զանազան և զարմանալի, սրբատաշ և փայտեաց գեղագործեալ ծաղկով քօշկեր, և թրծեալ աղիւուեաց պալատներ, բաղանիք և մատրասաներ, բարձր ասեմ քարեայ զըրամբք շինեալ ոսկեզօծ, որ յար և նման նիւզանդիս քաղաքին: Եւ ամենայն տուն Հոյքի և Տաճիկի միապէս շինեալ կան և շինին. զանազանութիւն ոչ կայ, և առանց ջրոյ ոչ որ է. ուրեք ուրեք որ գտանի, որ ոչ գոյ աղբիւր ի տան. բերեալ զերեսօք անզնզոց և կէսք բերեալ ի պորտոյ քաղաքէն ի բարձրաւանդակ տեղուղին. աղբիւրք սասն և բարեհամ, որ զըրխչաշմայ առեն. և կան այլ աղբիւրք անուշահամ, որ ջաննաթի կոչեն. որ ի Վարդավառին ամիսն այնպէս սաստիկ սառն է, որ ատամ շի հանդուրժել, որ կուշտ ըմպես. որ մէկ դառն ուտես և ըմպես ջուրն, առժամանակն հալէ և մարտէ. այնչափ աղբիւր կայ ի մէջ բերդին, յորժամ ի դուրս ելանեն երկու ջաղացք յառաջ կուհանեն: Սպանդանոցք և շուկաներ, սալարակապ խաներ և փութկաներ, քարտաշ գեղեցիկ շինուածովք եկեղեցիք բաղումք, որ այժմ

ի ձեռա Տաճկաց անկետ կան, զորն արարեալ
են ամբարանոցք, և զորն քակետ և քայքա-
յեալ են։ Դեռ ևս կայր ի մէջ ըերդին եկեղեցի
մի սագաշէն դեղեցիկ։ Սանոս Զէլէպի ոմն բա-
րեսկաշօն Հալացի, եկետ ի քաղաքո ՌԱՅ։ Թը-
վին հրամանաւ Սուլթան Մուրատ թագաւորին
և վէզիրին իւրոյ Խոսրով փաշային, եղեւ մէծ
մաքսաւոր և կօմրուկչի Արզրումայ քաղաքիո,
և եգիտ շնորհու առաջի փաշաներաց, իւր հան-
ձարեղ իմաստութեամբն և խոհեմութեամբն
վարեաց զիշխանութիւն իւր, որքան եկաց, զի
տայր թագաւորին ձն։ զուռուց, թող զիտա-
շային և իւր կարեացն, և առաւել այնչափ
վարձք արար, որ Աստուած միայն զիտէ, զի
մինչեւ Ռ., զերւոյ ակատութեան առիթ եղեւ
ինքն, զի այն ժամանակին մէծ Թուրքու այս մարտ
մտեալ էր Պարսից, ՌԱՅ։ Թվին ի վեր պատե-
րազմէին և աւելի էին զերկիրս մինչեւ ՌՅԹ թվին,
որ զնաց Սուլթան Մուրատն տան անգամ ձն։
ողւով և էոռ զբարելոն ի ձեռաց Պարսիցն, և
ելից զօրօք բայգօք և գարձաւ ինքն և վազիքն
ի Ստամպոլ։ և վազիրն այն Առնաւուտ էր և
յոյժ հանճարեղ, Մուստաֆայ անուն, որ բա-
զում ժամանակու վարեաց զիշխանութիւնն, առ
ինքն ունելով զարքունական մատանին։ և ա-
րար խաղաղութիւն և հաշտեցոյց Սուլթան Մու-

բառն հետ Դպրակաշին, ուլստ և դաշինս եղին, ոք Երէվան Դպրակաշին լինի և Պաղտաստ Օմաննցուն, այլ միմեանց թուր չքաշեն, վաճառականք և շնորհականք աներկիլուղ գայցեն և գնասցեն. հօտք սոցա և նոցա այժմ խառնին ընդմիմեանս, զի Երեք տարին անդամ մի առաքէ շահն ընծայ ի Ստամբուլ ապրշմեղէնս, ֆիլս, միեղջեւրիս և այլ պիտոյս թագաւորացն. զի Խաղաղութիւնն Առտաւծոյ Նախախնամութենէն եղեւ, որ աղատեցաւ ազգս Հայոց երկուց կողմանց գաղանացն. զի այն կողմն ընակիչք Երերին ամենայն Հայք էին և են, և այս կողմն ամեներեան Հայք. զի Մուստաֆա վազիրն այն բարի անուն Ժառանգեաց, և այս կողմանց բերդորէից պահապանքն ըստ իւրեանց յաջող ժամուն ելանէին ամենայն տարի բազում զօրօք և գնացեալ Երկիրն Երևանայ, Զօրսայ, Լոռու և Բամբկաձորու ասպատակէին, երէին և աւերէին, մեծամեծոն ի սուր քարշէին, զիին և բգտղայսն գերի բերէին: Նմանապէս Պարսիկքն քան զսոսա չարք և անողորմք և բարբարոսք ամենայն կողմանց ելանէին դաղտագողի ասպատակէին, Կաբսայ և Անու Երկիրն, Վանայ ծովափին ամենայն մինչեւ ի դաշտն Մշու և Խընուսայ գերէին և աւերէին, զիին և զտղայսն գերի տանէին և զմեծամեծոն ի սուր սուսերի

մաշեցուցանէին, զի այնպէս անապատ արարին այս սահմաթ երկերներս որ Արդրումայ հետ մընչեւ Երէվան միայն բերդորայքն ի շէն մնացին ^{12:}

Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեշղաց մերոց. զի ո՞վ կարէ ընդ գրով արկանել, բայց Սուեղծողին միայն է յայտնի, որ դիտէ զամենայն: Ապա յարոց Աստուած ի ժամանակին այնմիկ հողիընկալ երիցո երանեալ գերադանց Մոլոէս կաթուղիկոսն ՈՀԹ. Ժվին. զի ամենայն զօլվաթաւորաց հարկ գնէր, որ զգերեալսն աղատէին. զի ինքն ևս իւս ընչեցն տայր և աղատէր ամենեքումքք. Երեք չորս հաղար զերի աւել Երէվան և ի Թարվէզ և այլ գիւղաքաղաքարան աղատէին և առաքէին յաշխարհն իւրեանց, զի այն ժամանակն աղկո Հայոց վաճառականաց յոյժ ընչառէրք և փարթամք էին յայս կողմն և յայն կողմն, վասնորոյ նոյն Սանոս Զէլէսլին և քաղաքի դովլաթաւորքն և վաճառականներն անչափ գերիս աղատէին և առաքէին ի տեղիս իւրեանց, որոց յիշատակն օքնութեամբ եղիցի: Խոկ իշխանն այն Սանոս, Եկեղեցի մի կայր ի մէջ ըերդին, որ տուն և ուրայր էր Տաճկի միոջ, առեալ դրամով զտունն հանդերձ Եկեղեցեաւն և ետ Հայոց. և ի հասանել Ո.Զ.Զ. Ժվին քանդեալ աւերեցին զսարայքն. մեծ և փոքր քահանայք և ժողովուրդք ջերմ

սիրով շինեցին մեծ փայտեայ ժամատուն, և
քաղում դրամս մոխեցին ի գրունս փաշանեա-
քացն. և լինէը յարաժամ փառաթանութիւն
Աստուծոյ սազմոսերգութեամբ և պատարագօք:
Խոկ ի հասանել Ո՞Ճ. թվականին Հայոց եկն Երկ-
րէն Վանայ մօլայ մի Վանի անուն ճարտասան
և յոյժ հմուտ զուռանին և քարողող նոցին.
Եկն ի քաղաքս Արզում և Ել համբաւ նորա
ընդ ամենայն Երկիրս Տաճկաց. և Էր յոյժ կեղ-
ծաւոր անընչութեամբ, ոչինչ առնելով ումեքէ
ըստ նմանութեանն. կախարդին Սիմոնի և Նաք-
րովի. և Եգիս շնորհս առաջի փաշաներաց,
մինչ որ իմացեալ վեզիրն և տարաւ Ստամպօլ
և յոյժ մեծացոյց և արար խորհրդակից թագա-
ւորին և օր ըստ օրէ Ելից չար խորհսդով. և
օձապատիր լեզուաւն իւրով հաւանեցոյց միտս
վեզիրին և արքային, որ ետուն սաստիկ հրա-
ման Ո՞ՃՄ. թվին ի մէջ Ստամպօլայ, որ մինչեւ
տասն Եկեղեցի Հոռոմոց և Հայոց քանդեալ ա-
ւելեցին, և ի գլուխս ամենայն քրիստոնէից
Ստամպօլայ մինչեւ ի Թօխաթ և ի Սեբաստիոյ
վիճակն ու գտակ հագուցին, և փակեղն եա-
սախ արարին: Եւ մօլայս այս յամը էառ թա-
գաւորէն և առաքեաց ի վերայ փաշային Ար-
զումայ, և առին զեկեղեցին, որ ի մէջ բերդին
անուն սրբոյն Ստեփանոսի, և արարին մզկիթ.

և եղեւ սուդ մեծ ազգիս հայոց, որ մնաց մեկ
եկեղեցի պարսպէն ի դուքս անուն ութոյն Աս-
տուածածնայ, զոր հիմնարկեալ է Մերոպաց
վարդապետէն և շինեալ է ձեռամբ Գաւթի Ան-
յաղթին և Մովսէսի Քերթողին, և առաջմանէ
հոչակաւոր վանք Լեալ է քաղաքիս ի ժամա-
նակս մեծ կայսերն Կոստանդնուպոլսի Փոքուն
թէոդոսի, որ դպրոց է եղեալ և միաբանակե-
ցաց տեղիք, որ այժմ Միաբան Սուրբ Աստուա-
ծածին կոչեն: Եւ ի միջոյ բերդի եղեալ քրիս-
տոնեայքն և քահանայքն ամենայն մնան մին-
չև ի ծագել արեւուն, յորժամ զբերդի դուռն
բանան, ապա դիմեալ գան յեկեղեցին, և ա-
զօթեմք ի միասին: և եմք երեսուն քահանայ
եղբայրք սիրով առ իրարս, ամենեքնան գրա-
պիք և ծաղկաբարք, ժամասացք և ճարտա-
սանք, հմուտք հին և նոր կտակաբանաց, զե-
ամենայն օր ձ՛Յ. վոխ սաղմոսն վճարի անխաւ-
լիան, ժամ և պատարագ մատչի, սարկաւար-
դունք բազումք վիափիածայնք և երգողք գոյն
զգոյն եղանակք երաժշտական երգոց և տու-
մարական արհեստից, պարկեշտ դնացիւք և
քաղաքավարութեամբ ի լի: անդադար կան ի
վիառաբանութիւնո Աստուծոյ, զոր Տէր Յիսուս
հաստատուն և անդրդուելի պահեսցէ ամէն:
Եւ դուռն բերդին այն, որ ընդ հիւսիս հայի,

Աանայ և Վրաստան դուռն կոչեն, որ զաքման նալի խաչեթ կան դրօշմեալ ի պարիսպն, հիանալի տեսողացն, և ի վերայ միջի դրանն սեմոցն դրօշմեալ կայ սրբոյն Սարդսի պատկերն նիզակ ի ծեռին և հեծեալ երիվար առ ի պահպանութիւն քաղաքիս: Եւ պարսպէն դուրս չորս կողմն շինութիւնք բաղում, և կան ընակեալ մինչ ի քառասուն հազար տուն մարդեկք իսպահիք և ենկիչարիք յոյժ ընչառէրք, բայց յտղգէն հայոց երկու հազար տուն հազիւթէ դտանիւ և վաճառականք ի չորից կողմանց հայոց ազգէս անթիւ կան նստեալ տարին բոլոր ըովանդակ ի գնել և ի ծախել իմառչայ և ապրշումնդէն, ցեղ ու ցեղ զումաշ և զանաւուդ, չուխայ, կտաւեղէն և քթան, անթիւ և բազում ջափահիք քար՝ ալմաստ և յեազութ, զըմբութ, լալ. սամուր և վարչախ և ամենայն մազեղէն տարին բոլոր յայտնի գնեն և վաճառնէն, զի այժմ քաղաքս այս յոյժ բանտարէ նման Ստամպօլայ, որ տարին ֆիւ. բեռ մտանէ և ելունէ, որ ձիւ. զուռուշ մտանէ քսակն իմաշային, թո՛ղ զիւր թեմի և սարերու Քրդերուն գելուրն, այս ամենայն գալօղ և գնացող վաճառականացն:

Եւ բերդս այս շինեալ կայ բարձրանիստ տեղիս իրը թագաւորական դահոյք նստեալ առ-

ստորոտով բարձր լերին, որ նողալար և Գոհաւ-նամ 45 կոչին, և հայի ի վերայ բոլորածե խոտալի և ջրաւէտ գաշտին և դեղեցկաշէն գիւղօրէիցն իւրոց և առաւել ի վերայ օքհնեալ գիւղին Կա-նայ. որ անդ ընակեալ կան երեքհարիւր տուն Հայք, և ունին դեղեցկաշէն եկեղեցի մի, անուն սրբոյ կուսին Վառվառեայ կառուցեալ. որ տապաստ և ծաղկեալ տղայքն տանին ի գուռն, առ Ժամայն չորանայ և աղատի շնորհօքն Քրիս-տոսի և սուրբ կուսին Վառվառեայ. և կան քահանանայք տասն և սարկաւագունք յարաժամ վառաբանութիւն Աստուծոյ: Եւ ունի գիւղս այս և գաշտս սեաւս և պաղաբես հողս. որ գարի և ցորեան և կտաւատ բազում լինի. որ բոլոր շրջակայ գաւառոներն ոոքա լնուն ձիթով, որ տասներկու նուկի ձեթն երկու զսամ ար-ծաթոյ կուտան: Եւ լինի գիւղս այս գոմիշ մեծ և անճոռնի, և դեղեցիկ եղինք ախորժք աեսո-ղացն, և է այժմ շրջակայ գիւղքս և գաւառքս ամենայն Հայաստան և ողորմութեամբն Աստու-ծոյ քան զամենայն երկիր հանդարս և խա-ղաղութիւն, առետուր բազում յոյժ, լիու-թիւն հացի, մսի, եղի, տունք և ապարանք շնուրածք ամենայն որպէս Տաճկի հանդերձ և կանացի զարդեր, ոսկեղէնք և ասլրշմեղէնք, որ-շափ և կարես, ի գլուխս տղայոցն և արանցն

ամենայն գօտի զարով և փաթանի հագեստն
ամենայն արանց աթլաս և ծիրանի չուխայ աղդ
և ազգ, ի բաղնիսն Հայ և Թուրք ի միասին և
անտրտունջ, լաւ և խելացի դատկան հողագործ
և փէշաքար, ամենայն ժուռ գալող մարդ, որ
իւր թագաւորական հարկն և խարաճն որ տայ
փաշային, այլ կարող չէ ուրիշ Տաճիկ վատ
խօսք ասել կամ ձեռն դնել ի վերայ Հայի. ա-
մենայն կողմանէ բարութեամբ ի լի է. ծառոց
պտուղն՝ խնձոր և տանձ և խաղող շուկաներն
ի լի մինչեւ ի Հայոց զատիկն. ձիթապտուղ, շա-
պալութ, կաղին և չամիչ անթիւ, արմաւ և
նուշ ի բոլոր տարին. իսկ ի մտանել աշնան ե-
զանակին ի նոյեմբերի և. յորժամ արեգակն ի
ծովին մտանէ, օր ըստ օրէ սաստկանայ ցուրտն
և սկսանի գալ ձիւն բազում, մինչեւ ի գեկտեմ-
բերի Ժ. դարձի արեգականն պաղի գետինն,
և ջուրք ամենայն սաստիկ, և լինի շամանդաղ,
որ է մռայլ. որ փոքր մի հեռուստ աչք ոչ կարէ
տեսանել զմարդ. և թէ մէկ փառք սաղմոսի
չափ և կամ աւել ուրեք գնայ մարդ, հեր
դլսոյն և մաղ մօրուացն սպիտակք և պեսերն
որպէս ոչխարի յետք լուլայ կախեալ լինի. ապա
ի բերմանց աստեղաց և տանուտէրաց տարի
կայ, որ քաղցր օդով և անձիւն անցուցանէ ձը-
մեռն. իսկ յորժամ հասաւակ լինի և արեգակն

ի խոյն մտանէ, կակղանայ երկիր և հարաւ հող-
մով հալէ զամենայն ձեւնսն. և ի մտանել ապ-
քէլ ամիսն ցանեն պարտէզ, գարսի և ցորեան
անթիւ. և այս ամսոյ նոր յեափրազ խաղողին
դայ ի քաղաքն, և ձուկ բաղում կարմրախայտ
աղդ և աղդ՝ հօխան մէկ ստակ, և զանազան
երամս հաւուց և թռչնոց ճռվողականաց ընդ
երեսս դաշտին սփռեալ լինին երամագնացիւք,
և ըաղումք ի ձուոցն և ի հաւուցն կերակրեալ
լինին. իսկ ի մտանել մայիս ամսոյն կանանչա-
ցեալ ստղարթախիթ դրախտասարաս կանան-
չանայ սար և ձոր, պտղաքեր ծառք ծաղկեալ
միթթին, և լերինքն հանեն ծաղկունք անուշա-
հոտք և գոյն զգոյն ցեղ, պիտանիք դեղոց և
օղտակարք տչաց և ցաւոց շուշան վայրենի և
ծաղիկ տնթառամ, դեղեցիկ թութիայ և լա-
լայ, լոշտակ, տղգ և տղգ բանջար ցեղ ու ցեղ
մանուշակ. որ գան քժիշկք ի Պարսից և ժողո-
վեն զոմանց զդլուխն և զոմանց զտակիվին, տա-
նին ի պէտոն դեղոց: Նմանապէս ի գլուխոն լե-
րանց լսու, և ազքերակունք անթիւ սառն և
ըստեհամ, և ի չորս կողմն քաղաքին յեայլանի
Քրդաց և գիւղօրէից, և ջոկք հօտից և ոչխա-
րաց և անասնոց և վայրի երէք և եղունք բա-
ղում սփռեալ կան ի ձորս և ի գլուխոն լերանց-
ոքոողք նոցա ի մոոյ կերակրեալ լինին. իսկ ի

հասանել մայիսի քսան և հինգն դայ քալ և
տանձ, խնձոր և ծիրան ի պարտիզաց: Եւ ի հա-
սանել դարձի արեգականն յունիսի ժթ. ամեւ-
նայն պառուղք ծառոց բազում դայ ի Վաս-
տանայ: Եւ ի մտանել յուլիսն յոյժ շողանայ
երկիր և լինի աղնիւ տիրու, ուր և կոմիս նըն-
ջեաւ ի գեշերի և ի սունջեան, ոչ առ օձից և ոչ
երկիւդ կարճաց, ոչ ջերմ դող և կամ այտումն,
այլ ի ոիկ հանդարտ մեղմով: Եւ ընակիչք երկ-
րիս մարդիկք հսկայագունք և կարմիր երեսը,
արք և կանայք պնդակազմ առոյզ մարմնով.
յոյժ առողջարար և մնուցիչ է մարդկան ջուր
և հող երկրիս: Եւ ի մտանել օգոստոս ամիսն
հնձեն դարի և ցորեան, և դայ խաղող անթիւ.
ձմերուկ և խիար հասանի քաղաքս, որ յար և
նման ուրեք ոչ լինի անուշ և սպաղ խիար+ պար-
տիզաց սաւզիք քան զխոտ տիրան, դի այնպէս
բաղուկ լինի սպիտակ, որպէս ծիւն, և թղա-
չափի մի լոյն, ըողի և շաղկամ պարարտ և խո-
շոր, այնպէս որ մէկն չորս հօխայ կշռոյ դայ+
որ հեացեալ տեսողքն փառոս տան Աստեծոյ:
Եւ ի մտանել աշնանն սեպտեմբերի ժթ. ժողո-
վեն արգիւնո զամենայն ի շտեմարանո: Եւ է
երկիրս այս յոյժ լիութիւն հացի, մոի, եղի և
դինոյ, փայտ, աղ և մեղք անասելի և ան-
պատմելի, զի և ոոք երկայն փայտն և գրկա-

չափ լայն և հաստ փիճի փայտն մէկ դուռուց,
որ մինչեւ ի ծայրն ոստ չկայ. որ ի տեսանելն
մարդ հիանայ և ապուշ մնայ. դառըն մէկ
ուռալ, ոչխարն երկու զուռուշ, կովն վեց ուռալ
կամ ութն ուռալ, ձի և եղն, էշն նոյն գնով,
եղ և մեղք կէս կէս դուռուշ մէկ լիտրն, գինի
անթիւ, և սոքա անպակաս տարին ի բոլոր. և
այսպէս այլն ամենայն իմասցիս, հանճարեղ և
պատուական եղբարդ իմ, զի թէ գտաւ ինչ
ի սմա ըստ հաճոյից ձերոց կամաց Տեառն է շը-
նորհք և ի Տեառնէ գոհացարուք, և թէ ոչ, նե-
րուժն հայցեմ յանցանաց իմոց:

* * *

Եւ ունի քաղաքու և երկերս այս աթոռք
երեք, որոց առաջին և գլուխ է քաղաքիս ա-
թու սուրբ Լուսաւորչի վանքն որ Մուտուու-
կու⁴⁴ վանք ասեն, որ է այժմ միաբանակե-
ցաց աեղիք: Ի թվականիս մերոյ ԱՊէ, եկն Ըս-
տամպօլցի Սարդիս վարդապետն սուրբ Էջմիա-
ծնայ նուիրակ, որ անդ էր վարժեալ և ունէր
ձայն ահեղ և անուշ. որ և հաւանեցոյց զքա-
ղաքս և երկերս ճարտար քարոզութեամբն իւ-
րով. և եպիսկոպոսն Վաղար իւրովի կամօքն
հրաժարեցաւ և ետ ի նա զվանքն. և նա դար-

ձաւ առ կաթուղիկոսն Փելիպպոս և էառ հրաւանն նստիլ մեծագահ աթոռն Թէոդուլոլի+ և եկեալ արար բազում շէնք և շինուածք ձեռնատութեամբ քաղաքիս և վաճառականտցն, և յոյժ աշխատութեամբ երեր ջուր և եհան ի դուռն վանացն աղբիւր և ջաղացք, և այլ ուղղութիւնն և կարգս արար ի վանքն, զոր Տէր Աստուածն պահեսցէ հաստատուն մինչեւ ի կետ կոչմանն իւրոյ ամէն:

Եւ միւս վանքն է Անձուց վանքն, յորոց և յիշատակէ Մովսէս Խորենացին+ զոր հիմնարկեալ է Մեծին Ներսէսէ կաթուղիկոսէ, որ թուուին թոռ էր որբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին+ զի յորժամ թագաւորն Հայոց Արշակ առաքեաց զներսէս իշխանօք և բազում զօրօք ի Կեսարիայ և ելեալ գնացին անդ+ և սուրբ հայրապեան Սերի տեսեալ զհըաշագեղն Ներսէս և փառաւոր իշխանք ընդ նմա, յոյժ ուրախացաւ և պատրաստեաց ձեռնազբել զներսէս կաթուղիկոս Հայոց ընդ նմին և Բարսեղ Դայտար ընկալան, նոյն ժամայն յայտնապէս Հոգին Սուրբ Աստուածէջ և վերայ նորա այսինքն որբոյն ներսէսի և Բարսզի, որ ակներեւ ամենեքեան տեսին երկուցունցն արժանաւորութիւնն և հիացեալ փառսետուն Աստուածոյ, որ այնպէս առաջնորդ ու-

Նին սրբադան աղքն Հայոց. և առեալ զառւըն
Ներսէս իշխանօքն տմենայն դօրօք յոյժ ուրա-
լսութեամբ աշխարհո Հայոց մտին. և ամենայն
քաղաք ընդդէմ նոցա երթային. ուր և հանդի-
պէս հիմնարկէք եկեղեցիս, կարգէք քահանայա-
պետս և ձեռնադրէք եսլիսկոպոսս, և շինէք
ի վերայ ճանապարհին հոգեւունս: Եւ եկեալ
էանց ի գաւառն Դերջանայ և հասեալ ի մօտ
դաշտին Կարնոյ, լուաւ քաղաքապետն դդալն
Եշխանացն և ուռը հայրապետին, ել ընդ ա-
ռաջ նոցա բազում պատրաստութեամբ և զօ-
քօք և տարեալ եմոյծ ի բերդն Արզումայ, որ
էք վոքը իւ, զոր յետոյ հըամանաւ Փաքուն Թէո-
գոսի շինեցին և մեծացուցին: Եւ արաք սէք և
ընդունելութիւն սուրբ հայրապետին և պար-
գեստ բազումն ետ նմա. և նոյն ժամանյն ել ի
սուրբ բարձրաւանդակ տեղին և խաչակնքեալ
փրկարան սուրբ Կշանտուն, որ ունէք ընդ ին-
քեան, օրհնեաց զքաղոքն և զերկիրն և զիշ-
խանս և ընակիչքն ամենայն: Եւ ելեալ սուրբ
հայրապետն համնդերձ իշխանօքն և զօրօքն ամե-
նայն և գնացեալ հասին ի գիւղն Հնձուց դէսպ
արեելո կոյս ի բարձրավախնդակ տեղին և անդ-
ընակեալ նոտան. զի դէմ եղեալ էք սուրբ հայ-
րապետն գնալ յաթուն իւր սուրբ Գրիգորաշէն
որ ասի Էջմիածին: Եւ ի գիշերին այնմիկ տե-

սիլ զարմանալի ետես սուրբ ներսէս յայտնապէս, որ սուրբ Առտուածածինն նստեալ դէմ յանգիման վիմին ծիրանաղբեստ վայլակնաշայտ, և հրեշտակք պարունակեալ ունէին զնա և եղանակէին ասելով. Դու ես հարսն անարատ Հօրն երկնաւորի, որ և մեք սարսեալ գողամք: Եւ ընդ լուսանալ առաւատաւն հրամայեաց զօրացն քարինս ըերել և էարի հիմն եկեղեցւոյ ի նոյն տեղին, յոր ետես նստեալ զսուրբ կոյմն ի վերայ վիմին. որ է մինչեւ ցայսօր հռչակաւոր և միաբանտկեցաց տեղիք, որ այժմ Կարմիր վանք կոչի. և ունի ձորն անսալպատ կուսանացն և ճգնաւորացն և բարեհամ աղբիւր և վայելուչ վայրք, որ Հռիփսիմեանց կոչեցաւ, որ է մինչև ցայսօր:

Եւ միւս վանքն է լի կողմն հիւսիսոյ, որ յանուն սուրբ խաչին է շինեալ և կառուցեալ. զոր վարք ի շատէ ծանուցեց քեզ. և թէ խաչափայտին զբովանդակ պատմութիւնն հարցանիցես, լիակատար գրեալ կայ լի Կիրակոս պատմագիրն և այլ ուրեք^{*)}:

^{*)} Կրկնուրին է Սերէոսի և ուրիշների նաղորդածանօր պատմութեան, որը չարագրուեցաւ:

Այսուհետև սկիզբն արացուք և գետոցն պի քաղաքու և լեռունքն բարձր են քան զամենայն երկիր։ Երբե դշատը ուան ըղիսեն զանազան ակունք ի չորս կողմանց լեռանց։ և լինի չորս գետ։ և ընթանան ի չորս կողմն աշխարհիս։ Առաջինն է գլուխ, որ ելանէ արևելից կողմանէ, որ Վրաստանպօղագ կասեն, ի Ծաղկաւէտ 15 լեռնէն մամն Եփրատայ, զոր Առատուածաշունչն գրէ անսղալ ի դրախտէն ելեալսա, որ արևելից ելեալ ուղիղ դէպ ի հարաւընթանայ։ Եսկ Մովսէս Խորենացին ասէ թէ երկու ակն է Եփրատս։ մինն ի Կարնոյ ելանէ և միւսն Ալաշկերտոյ, բայց գնացեալ երկոքինն Խառնին յիշար և լինի Եփրատ մի գետ։ Նաև Թուլկուրանցին 16, որ զԱրարածոց գիրքն ուք հանել է տաղիւ, յիշատակէ ասելով, թէ Եփրատ ի Կարնոյ ելանէ ի ծաղկազարդ տեղին, ուր Ասկեանքն զՍուքիստեանքն մկրտեցին։ և ի մկրտելն զմիմեանս փութացուցանէին, զի մըկրտեալքն զՔրիստոս աեսանէին և աւետիք տաշին միմեանց։ անդ և խաչ կանգնեցին Աւետեաց ի գլուխ ձորակին, որ կայ ի վերայ վիմին գրօշմած մինչև ցայսօր ի յակունս Եփրատայ։ որ ստուգիւ աստ են մկրտեալ։ որ բազում անգամ ուխտաւորք և մեք և Փելիպպոս կաթուղիկոսն 17 գնացեալ բազում վարդապե-

տօր. և անդ բանակ Եհար ի վերայ Աւետեաց
խաչին և արար պատարագ։ Եւ անտի Ելանեն
զանազան և բարեհամ ակունք և խառնին ընդ
յիբար, նա ևո Խաչափայտի ջուրն ևս խառնի
ընդ սա և գետանայ և գնացեալ առաջի Հըն-
ձուց վանիցն և լինի գետ մեծ և իջեալ ի մէջ
դաշտին դէմ յանդիման բերթին Կարնոյ ճա-
շոյ մի գնացք, և ծովանայ հանդարատ գնացիւք
և լինի շամպ, խոտ և եղէդ յոյժ և մօրայ, որ
է ցեխ, հաւուց և թռչնոց տեղի ապաստան։
Եւ գնացեալ հասանէ ի գիւղն ձրագ. և Զեր-
մուկ. և գայ ջուր Ցրաաձորոյն և բլրոյն, խառ-
նի և լինի գետ մեծ ի մէջ դաշտին անհուն և
ձայն արձակեալ գնայ ի ձորն ձինիշու։ Եւ ի
հիւսիսային կողմանէ Լեռանցն փոքր գաւառէն
Ովաճուղու, որ է ի մէջ մայրեացն, Ելանեն բա-
ղում ակունք. և լինի գետ ոուր և ախօրան,
և մտանէ անհուն ձորն Ծիրանայ և Սառչամու,
և հասանէ ի գիւղն Մասուր, և խառնի ընդ
յառաջ Գաղաառինու կարմնջին ընդ Ելրատայ,
և մտանէ ի ձորն Շողենու, և գնացեալ հասանէ
ի Գերջան ի գիւղն Բագառին և Կոթեր։ Եւ
գայ ջուրն Լակղոյ Խորձունեացն և Կեղոյ և
միանայ. և լինի Խփրատո ծով. և անտի ոլորտո
տալով, գնացեալ հասանէ Եղնկայ և կտրեալ
ընդ մէջ դաշտըն ի չորս կողմանցն, բագում

ջուրք խառնին ընդ նմա. և գնացեալ հասանէ
ի բերդն կամախ և մաեալ քարածորն Ակնայ և
Արապկերու, և անտի հասանէ ի գաւառն Զը-
մշկայ ի գլուխն Մալաթիոյ: Եւ միւս ակն, որ
ելանէ ի Տիատին բերդէն ի գլուխ դաշտին Ա-
րաշկերտու, բազում ակունք յորդառատ, և
խառնին ընդ յիւրաք և գետանան, և գնացեալ
ի մէջ դաշտին խառնին ջուրք բազումք, և լինի
գետ մէծ, որոյ անուն Մուրատ ձայնեն: Եւ
անտի գնացեալ հասանէ ի դաշտն Մանազկեր-
տու և ընդ ստորստովն Խուռու, և մտանեն
բազում գետք. և գնացեալ հասանէ ի դաշտն
Տարօնոյ առաջոյ վանիցն սրբոյ Կարապետին և
մտեալ ի ձորամէջս առաջս ամուս բերդին Ող-
կանայ, ուս սուրբն Գրիգոր Լուտաւորիչն ամ-
րանայր, և ոլորտս անցանէ ընդ գաւառն ձա-
պղջոյ. և հասեալ ի բերդն Բալու և լինի Մու-
րատս անտանելի գետ, և շրջեալ իջանէ դներ-
քին կողմամբն Խարբերթու դաշտին և գնացեալ
հասանէ և սա ի գլուխն Մալաթոյ. և միւտան
ընդ յիւրաք երկու յակունքս և լինի Խվրատս
մէծ ծով, որ Արապի բառով Ֆրատ ասեն գե-
տոյս: Եւ գնացեալ մտանէ ի ձորն Ապտէհերու
և հասեալ ի բերդն հայրապետին մերոյ Ներսէ-
սի, որ Կւայ յորջովի, և շրջապատեալ զբերգնու
գնացեալ հասանէ ի Բորաճուկ, որ նառք գնան

Ե վերայ. և այնուհետեւ անկանի ի մէջ դաշտին
և հանդարս գնացիւք բազում չօլու և անա-
պատսս անցանէ. զի որչափ վայըի Քուրդ և Ա-
րակի գիւղք և շինուածքը կան, առ եղերըն գե-
տոյս են ընակեալք, որ ամեննեին ձիւն չեն տե-
սանել: Եւ գնացեալ հասանէ յանդիման Պաղ-
տառայ ի բերդն Զուռնայ ի սահմանս Հիլլա-
յուր, և անտի խաղացեալ ն. աւուրը յառաջ,
և դայ Դկլատ գետն Բարելոնի, որ է Շատն,
զոր Աստուածաշունչն գետոյս Տիգրիս կոչէ. և
խառնին ընդ յիրաք Եփրատս և Տիգրիզս և
միաւորեալ գնան ի Բասրայ քաղաքն. և մտանէ
ի ծովն Հնդկաց, որ է Սպիտակ. զի իմաստա-
սէրն Արիստոտէլ սորա Ովկիանոս ասէ. զի Սպի-
տակ ծովս է շրջապատեալ ի Գ. կողմն աշխար-
հիս. զի Գ. գետք ի գրախտէն ելանեն. Երկուք
սորա են՝ Տիգրիս և Եփրատէս, որ Հայոց Երկ-
ոքն ելանեն և գնացեալ ընդ իրաք միանան.
զի ըուն Երկիրն Ասորոց ի մէջ Երկուց գետոց
են ընակեալ իրը կղզի. վասն այսորիկ գիրք ա-
մենայն Միջագետաց Ասորոց ասեն. զի Տիգրիս
Հաշտէն գաւառէն ելանէ և գնացեալ յԱմիթ,
ի Մուսուլ և ի Պաղտատ և խառնի ընդ Եփրա-
տին, որպէս ի վերոյ գրեցաք: Եւ Քրիստոսի
վիառք յաւիտեանս ամէն:

Այսուհետև վերջ արասցուք և վիրատին և
սկիզբն արասցուք միւս գետոցն, որ թղխեալ
ելանեն ի հարաւային կողմանց բարձրաբերձ լե-
ռանց ի բինգօլէ Հազար Ականց ⁴⁸ սկիզբն ի
նուղալարայ, և խառնեալ ընդ իրար գետանայ
և գայ մտանէ ի ձորն Թէքմանու և լինի Արագ:
Եւ սկսանի գնալ ուղիղ գէսլի արևելս և հա-
սեալ ի դաշտն Բասենու, գնացեալ ի Զօպանի
կամուրջն. և գայ Վերին Բառենու ջուրն և
խառնի ի մէջ կամրջին. և լինի Արագս գետ մեծ
և անհուն: Եւ գնացեալ մտանէ ի Վիշապաձորն
Կաղզվանայ. և հասեալ Աղճաղալան, և գետն
գայ Ղարսայ և յԱնոյ, որ է Սխօրան, և խառնի
ընդ Արագս, և ոլորտս տալով, գնացեալ հա-
սանէ Երկիրն Երկվանայ և Դվինայ և ընդ ստո-
րոտովն մեծին Մատիսոյ. և գան ջուրք Այրա-
քատեան գաւառացն և խառնին ընդ Արագն և
Տոլանայ. և կտրեալ զներքին կողմն Այրարա-
տեան դաշտ և գնացեալ հասանէ ի գիւղա-
քաղաքն Աստապատ և Զուղայ, որ նաւորդք
գնան ի վերայ. և անտի մտեալ ի խորածորս
բազում աւուրբք, և խառնին ջուրք բազումք.
և գնացեալ հասանէ Երկիրն Երվանայ ի Դար-
բանտն, որ է Նամախի, և միանայ ընդ Կուբ
գետին և մտանէ ի ծով Կասբիական, որ է
Կիլանն:

Եւ միւս գետն ձուլուս ելանէ ի հիւսիսոյ լերանց քաղաքիս ի թաւ մայրեաց միջոյ ի դաւառէն Զորմարոյ և դիմեալ գայ ուզիդ դէպ ի հիւսիս ելանեն ակունք բազումք և զանազան և յառաջացեալ խառնին ընդ յիրար և գետանոն և իջանէ ի ձորն Մաստարու ։ և զնացեալ հասանէ ի քաղաքն Բարեթ և ճեղքեալ յերկուս բաժանէ դշինուածք ։ և շրջեալ զբերդն անցանէ ընդ մէջ դաշտին ։ և գան ջուրը և չուրեց կողմանց և խառնին ընդ սա ։ և լինի ձուրուս մեծ և անհուն ։ և մտեալ ի ձորս խոր Բոպերու և հասանէ ընդ առաջ սուրբ Յովհաննէսու վանիցն, որ կայ անդ ամիսովեալ զճկոյթ սրբոյն Յովհաննու Կարապետին ։ և անտի առաջ խաղացեալ հասանէ ի բերդն Բոպերու և Ագրակ ։ և զնացեալ ի բազում աւարու ի մէջ անտանելի ձորոյն, հասանէ ի քաղաքն Վրաց Արդվին, որ ձեթապառուղ լի և անթիւ լինի ։ և ի մէջ ձորոյն առ ավն գետոյս երկու կողմն բովանդակ գեւդք և աւանք այգիք և ծառոց սլառուղք մինչ ցեզը ծովուն անպատմելի և անթուելի ։ Եւ գետք յոլով գան ի Թորթոմու, Իշխանայ, յ0խտեացն և Փանակու և միանան ընդ ձորուխիս ։ և հասեալ ի բերդն Կօնեայ առ յափն Սև ծովուն և մտանէ անդ ։

Եւ միւս գետն յառաջացեալ արեմտից

Երբանց Երկրէո և զիմեալ զնայ ուղիղ արևա-
մուտաս կոյս, որ Պայլ գետ ատեն առքա. զի ի
Գտյլ գետու Ելանեն անթիւ ակռւնք. և գեղջէն
Արքմայ Հերանցն ժողովեալ մտանեն ընդ ձորն
և լինին գետ սուր և զարհուրելի. և զնացեալ
հասանէ ի Մուրատ Վալասին. և անտի Նիկե-
սար քաղաքն, զի անտի էր սուրը հայրապետն
Քրիստո Նիւսացին: Եւ ջուրք բաղումք մտանեն
ընդ սա, և մտեալ ընդ Խորածորո և անցանէ
ընդ բաղումք դաւառո Հոռոմոց և հասեալ ի
Ու ծոլն և մտանէ անդ: Զի իշխանն Վարդ-
պատրիկ ի վերայ գետոց այս խոյս տուեալ և
կամուլճն ետ ընկենուլ ի գետն և լինքն էանց.
և զօրքն Հոռոմոց միախատական զիմեալ ի կա-
մուլչն ոչ գախն. և Տաճկացն զհեա մաեալ զորն
կոտորեցին, և կէսք ջրատայդ արարին հազարո և
ըիւրս: Ոչ թէ Վարդպատրիկն ի զուր արար,
զի առաջմանէ չարաճքիկ էին աղդն Հոռոմոց,
բաղումք նեղութիւնո հասուցին աղդիս Հայոց և
իշխանին, վիրաւորեալ էին ի ձեռս նոցա և ի
դիպոլ ժամու հայէին, որպէս ասա զոյն գոյ-
ծեալ հատուցին չար, նորա համար Հոռոմքն
շուն երմանի ասեն. ըայց արարմունք Երկո-
ցունցն ոչ էր հաճելի Աստուծոյ: Ապա նեղու-
թեամբն Աստուծոյ թագաւորեաց Մահմէտն և

Եհան զակն քըիստոնէից: Զոր Տէր Աստուած
վրդեալ աղատեցէ զմեղ ի ձեռանէ սոցա:

Այսքան վասն գետոցն, որ ելանեն Ար-
զումայ Լերանցն և որպիսի ճանապարհաւ և
որքան աւուրբք մտանեն ընդ ծովերն որիշ որիշ
պատմեցից քեզ կարգաւ, իմաստուն եղբայր:
բայց քան զնիվատն երկար ճանապարհ ոչ ոք
ունի. որն քսան կամ երեսուն կամ քառա-
սուն աւուրբք մտանեն ի ծովին. բայց Նիվատն
երեք ամսէն ճանապարհաւ ապա թէ մտանէ
ի ծովին: Բայց դիտեմ, զի պատմութիւնո պար-
սաւելի է իմաստնոց. բայց խնդրեմ աղաս առ-
նել զմեղ ի բարեասանաց և կամ զթերին լը-
նուլ. քանզի յոյժ խնդրեաց հարազատ եղ-
բային իմ Մաղաքիայ և քահանայքն և ոարկա-
ւարդունքն մեր յոյժ թախանձեցին և ես զիբն-
դիրս նոցա կատարեցի բարեխօսութեամբ սուրբ
կուսին Տաղիթայ, և Ամլորդոյն. նաև Կոռոս-
տուին մերոյ և ամենայն սըսոցն ամէն:

* *

Պարձեալ պատմութիւնս այս ի վերայ
նարնոյ քաղաքիո Միաբան սուրբ Աստուածածնի

Եկեղեցոյն է. զորոյ հրաշու և պատմութիւնս և
զօրութեան շնորհո ի մարդեկք յարագահաս
բազմաց հասեալ է. որոց և մինն ի բազմաց ա-
ռասցուք փոքր ի շատէ, զորս տեսաք աչօք մեր։
Յաւուրս իշխանութեանն Տաճկաց ի մեծ ինք-
նակալ կայսերին Ստամբոլայ Սուլթանն Մահ-
մետին, որ տիրեալ է մինչև ի Կարս և զիաղզ-
վան, յունիս ամսոյ և. սուրբ Լուսաւորչի պա-
հոցն, հինգշաբթի երեկոյին ի մէջ գիշերին կա-
տարեցաւ ըան Փրկչին ի վերայ միլ, որ առէ։
Աղթուն կացէք, զի ոչ գետէք թէ յորում ժա-
մու գողն ձեր գայցէ, յերեկոյի թէ ի մէջ գիշ-
շերի, կամ հաւախօսի, գուցէ եկեալ յանկար-
ծակի գտանիցէ զձեզ ի քուն. բացեալ էին եկե-
ղեցին մեր ի գերեզմանաց կուսէն, զփանճարէն
քակեալ էին և մտեալ ի կանանց չարտապն, և
իջեալ ի մէջ եկեղեցուն. և կային այն գիշերն
հինգ ոգի ի մէջ ժամատանն քնած. ոչ ոք ար-
թուն չէ եղեալ. մինչ որ մէկ երկուսն եարալի
են արարեալ. զիմեալ ի տաճարն կոպղայքն
կոտըեալ էին. և բազում անօթս տարեալ էին
թէ խաչ թէ սկիհ թէ արծաթէ բուրվառ,
աւ ետարան, շուրջառ. մինչ նոքա զայս ժողո-
վեալ էին, մինն ի փակակալացն եկեղեցուն
գաղտագողի գուրս եր փախեալ և ձայն ար-
ձակեալ ի մէջ թաղին. և գողքն այնոքի ի յա-

հէ ձայնին մազապուրծ փախեալ էին նոյն ճառապարհաւն ընդ որ իջեալ էին. իսկ ընդ լուսանալ առաւաօտուն եկն գուժկան աղաղակի առ աւագ երէց Տէր Գէորգն և ասացին թէ գիշերիս այսպիսի չար պատահմաւնք եկն ի վերայ մեր: Եւ ելեալ վաղվաղակի գնացաք որ մարդիկըն արիւնաշաղախ անկեալ կան և զգեստքն ամենայն տարեալ են. յայնժամ ծերունի քահանայն Տէր Գէորգ, որպէս ի հնումն առ Հեղեաւ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց դէմ սուրբ Աստուածածնի, ելաց գառն արտասուօք և ասաց. Տէր Աստուած բաղմագութ, և ողորմած, որ առնես իրաւունս, հան արագահաս օգնութիւն ի նեղութեան մերում. այլ որպէս կարգեցեր զիս ի պաշտօն քահանայութեանս և ետուր ինձ ժամանակ մինչև ցայսօր պահել զիս ի թշնամեաց, սակայն թշնամիք մեր և սուրբ խաչի քո ընկրկեա՛ և մատնեա՛ զնոսս ի ձեռն խստանիրտ արանց, զի մի՛ լիցուք նախատինք և ծաղը թշնամեաց մերոց. բարեխօսութեամբ մօր քո և կուսի տունս այս շինուած յաւիտենական ի փառս քո յաղգաց աղդս. և ասացեալ մեր զամբէնն:

Մինչ որ քահանայքն և ժողովուրդքն ամենեքեան ժողովեցան ի դուռն եկեղեցուն, նուքա ևս յահարեկ եղեալ, լացին մեծ ժամս:

Ասլա զգեստին տանելն այնչափ չէնք հոգալ, բայց կայն կուլայաք, որ Օմանցոց լշանութեանո չար սովորութիւն մի կտյը, որ գտանուտէրն կուլունէին, թէ զգողն քո ցոյց տուր մեղ, որ մէնք հախէն գամք։ Խոկ ի ծագել արևու ապաւինեցաք սուրբ Աստուածածինն, զընացաք միաբան ամենեքեան ի փաշան։ և էր անուն փաշային Մուրթաղայ, տեղեամբն գեղեցիկ և հասակաւն միջակ, հասկացուցաք մի ըստ միոջէ։ Յորժամ լուաւ գանգատն մեր, եհարց մեղ, թէ ի՞նչպէս կերպ մարդիկ էին։ ասացինք թէ Տաճիկք էին ողեք տասն։ Յայնժամ որտամեցաւ և հրամայեաց գահճապետին իւրոյ և այլ մեծամեծացն զօրացն իւրոց շուտով ընթանալ զինի նոցա չորս կողմն նահանգիս, և ասաց թէ պարտիք գտանել զնոսա թէ ի լերինո և թէ այլ գաւառս, ապա թէ ոչ զձեզ կտառմահ կուառնեմ փոխանակ նոցա։ նաևս ի մէջ քաղաքիս ետ սաստիկ հրաման որոնել զնոսա։ Խոկ մեք զուրբաթ գիշերն ամենայն հսկումն արարաք և աղաղակեցաք առ սուրբ Աստուածածինն և ի սուրբ Գրիգորն, առ մեզ օգնութիւն կոչելով։ Յայնժամ ի ծագել արեւ գտականն շաբաթ օրին եկն ձայն աւետեաց առ փաշայն թէ գողքն ամենեքեան ըմբռնեցին սղեք իրկոտառան և յերկիրն նեղու ի գտառան Անկղի

և գիւղն, որ կոչի Պղըճան, ձերբակալ արարին. և մեք լուեալ դայս ուրախացաք և գոհացաք զԱստուծոյ, որ դկամս երկիւղածաց իւրօց առնէ Տէր և աղօթից նոցա լոէ և կեցուցանէ դնոսա:

Խակ ի յաւուր կիրակէին ըերին զամնեան. և ետ բերել առաջի իւր երկոտասան սպին. գէմ յանդիման գիւան արար նոցա, զի էր գլխաւոր նոցա մեծ մարդ ժառայ թագաւորին. ունէր երեք գիւղ որ մականուամբ Պար մազսը կոչէին, և միւսն էր կարդացող մօլլայ նապան անուն, Եհարց ցնոսա փաշան, թէ դայս բանս գո՞ւք արարիք, ճշմարիտն ասացէք. դուք անուանի մարդիկ էք, թագաւորի անուն ձեր փերայ է. ես ձեզ դմիշ չեմ անեք. նոքա սւրացան, թէ քնաւ խապաս չունիմք. յայնժամ մռմռեալ փաշան, ել ի պալատէն, եկն ի մէջ ամբոխին, հրամայեաց տանջել զնոսա առաջի իւր. ետ մերկացուցաննել զամենեսեան, և ձգեց ցին քալիաթուն նախ մեծաւորին իւրեանց, զի էր յազթանդամ և կորովի. և նա ոչ երկեաւ ընաւ և զնշմարիտն ո՛չ ասաց. և հրամայեաց բերել զնապանն. և յորժամ սկսան տանջել, ազազակեաց և ասէ. մի՛ տանջէք դիս, զնշմարիտն ասացից ձեզ: Եւ սկսաւ մի՛ ըստ միոցէ ասել զոր ինչ գողութիւն արարեալ էին, թէ այսով առան եկեղեցի կանէ, որ բացեալ եմք.

ահա ձեր եկեղեցւոյ ապրանքն, կէսն ըերդի
մէջն է և կէսն այս նեղ տեղոջ է. և միւս ըն-
կերքն ասացին. Նապան մօլլան մեղ դիր ետուր
թէ Հայի մալն և եկեղեցւոյ ապրանքն Թուրքին
հալալ է. նորա համար զայդ արարինք: Եւ յոր-
ժամ զայս խօսքն լուաւ, առաւել զայրացաւ
փաշան, ուղարկեաց զօրք և զգողոց մինն հետ
նոցա եղիր, որ գնացեալ ի Լակզի, ըերին ըզ-
գեստն. և ձայնեաց զքահանայքն ի դիւանն. և
ետ ըերել զանօթն ամենայն, յայսչափ Տաճկի
յառջեն երաց, որ հազարք հազարաց կային ա-
ռաջի նորա. ասաց. Քաշի՛շ, ձեր խաչերն զօ-
րաւորք էին, մէկ որ չկորեան երկրորդ որ իմ
անունն բարձրացուցին, որ այսչափ գող բըռ-
նեցի, ինձ աշխարհիս գանձն արժէ. արի՛ք ձեր
ապրանքն առէ՛ք: Առաջ մատեաւ երեցիոխտն
Արքահամն, երկիր եպագ փաշային, և էառ ըզ-
գեստն ամենայն և բերաւ եկեղեցին. բայց մէկ
խաչ և մէկ աւետարան կորեաւ:

Արդ իրեւ եղեւ օրն չորեքշարթի Մուրթա-
զայ փաշան ետ զգողերն ի մունետիկն, թէ ընդ-
առաջ նոցա քարողեա՛թէ Ով ոք եկեղեցի բա-
նայ, հալն այս է. ամեն դռան երկու երկու
գող ցցեաց. բայց զՊարմազսըզն և մօլլայ Նա-
պանն ի Կանայ դուռն յանդիման եկեղեցւոյն
ի ցից եհան. ապա նապանն յուշ սատակեցաւ.

մինչև երեկոյն զըռւց ետուր, սուրբ Աստուածածնայ հրաշքն պատմեաց, թէ յովժամ մատաք ի գուռն տաճարին, ահ ու գողումն կալաւ զմեղ, այնպէս ուշաթափեցանք, որ թուէր թէ բիւրք բիւրուց հրեշտակաց պատեցին զմեղ, և յորժամ ելաք ի լեառն, այլ ոչ կարացաք գնալ այնպէս թէ սաք մեր կապեալ էին. կրկին դարձաք ի գիւղն մեր, որ եկեալ ըմբռնեցին զմեղ. այս տասներկու գողացն վեցն ցից եհան, և զվեցին յաջոյ ձեռն կտրեաց, տասներկուքն այլ չարաչար սատակեցան և եղէն որպէս զաղը երկրի: Այս բան արաւ, մէկ սատկ չէառ փաշան, այնպէս Աստուած քաղցրացոյց զսիրտ փաշային, որ շատ մեծամեծ Տաճկներ գիւլակ արարին փաշային, թէ Հայի եկեղեցոյ համար այուշափ Թուրք մի՛ ջարդեր, բնաւ ոչ ողորսեցաւ:

Եղբայրք, մեծ հրաշք ու զարմանք է այս լսողաց, որ երեք չորս աւուր մէջն այսչափ բան եղաւ. բայց Հայոց եղջեւըն բարձրացաւ, ուրախութիւնն անասելի և անպատմելի եղեւ, որ թէ քրիստոնեայ լինէր իշխանն, այնպիսի երս չէր անէր: Եւ էաք յայնժամ միաբան եղայրք այս եկեղեցին քահանայք տասն և հինգ, սարկաւարդունս տասն. այնպէս հաստատուն էր ժամակարգութիւնն, որ երկու դասով կու-

Երդէաք զամենայն շարականս և զայլ ամենայն տուն առ տուն։ և այնպէս սէր ու միաբանութիւն էաք, որ կուիւ մի չկացը կամ նախանձ մեր մէջն։ կարգացողութեամբ մէկ քան զմէկ ճարտարք, ամենեքեան որբութեամբ ոնեալք և պատարագողք, պարկեցա վարուք։ թէալէտ առելս յանդզնութիւն է և իմաստնոց պարսաւելի, բայց արժան համարեցաք գրել ըստ հրամանի Փրկչին, որ առէ։ Ոչ կարէ քաղաք թաքչիւ, որ ի վերայ լերինն կայցէ։ Բայց ի մէջ եղաւարցն քահանայական գասուցն ես միայն էի զառածեալ մեզօք տէր Գէորգի որդի Յակոբս, որ զայս վոքքիկ պատմութիւնս արարեալ գըրեցի ի զգուշութիւն ապագայիցն եղաւարցն մերոց։ Ո՛վ Միաբան Ա. Աստուածածին, պարծանք քրիստոնէից և վահան քահանայից, զի դու հիմնարկեալ ես և օծեալ ի որբոց վարդապետացն մերոց Դաւթայ, որ Անյաղթն է կոչեցեալ և Մովսէսի Քերթողին, զի դու մօր գութունիս, որ միշտ բարեխօս ես քրիստոնէից, լե՛ս բարեխօս տառապեալ ազգիս Հայոց Արդուումայ քաղաքիս, ամէն։

Այս եղեւ ի թուականութեանն մերում Բամ, ի ժամանակս հայրապետութեան Ա. Կշմիածնայ Տեառն Փիլիպոսի երիցս երանեալ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԵՐ

1. Մեր ուսիմական մատենադարանի կողման մատնուած ձեռագիրներից մէկն էր «Վարք Ս. Յովհաննու Ռոկերերանի»։ Նորա վերջում այլ գըշով կցուած էր սոյն նկարագիրը, որ բառացի արտագրել ենք՝ բացառութեամբ մի քանի երեսների, որոնք իբրև շատ ժանօթ նիւթի կըրկնութիւն այն ժամանակ բաց թողինք։ Վերնագիրը «Բանս է զՎերին Հայոց ի Յակոբ Երիցուէ» կցուած էր անմիջապէս վերջին յիշատակարանին, որը գրել էր 1438 թուբն Աւգուստ աբեղայն։ Գըշութիւնների տարբերութիւնը ցոյց է տալիս, որ այլ ոմն է գրել այդ շարայարութիւնը, որը նիւթով էլ տարբեր է։

2. Վերին Հայք ասելով տէր Յակոբն աչքի առաջ ունի Մեծ Հայքի 15 աշխարհներից առաջինը, որ է Բարձր Հայք։ Մով Խորենացու անունով պահուած աշխարհագրութեան մէջ ասուած է։ «Բարձր ոչ միայն քան զհայք, այլ և քան զամենայն Երկիր» վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա, այդ Երկիրը ծովի մակե-

բեռյթից բարձր է 5750—6050 և հին ժամանակ
ունել 9 դաւառ, այն է Գալանաղի, Աղեւն
(Առիւծ), Մզուք (Մնձուք, Մձուք, Մծուք), Ե-
կեղեց (Եկեղեաց), Մանանաղի, Դեղջան, Սպեր,
Շաղգամը (Շաղագոմը, Շատգոմը) և Կարին.
«Բղիսէ չորս գետո զօրեղս՝ զԵփրատ յարեմու-
տըս, և զԵրասխ յարելս, զՓայլ ի հարաւ,
զԱկամոխ, որ է Վ. Օ. (Ճորոխ) ի հիւսիս» (տ.
Աշխարհացոյց Մ. Խոր. հրատ. Հ. Ա. Ալոքի,
Վենետիկ 1881, եր. 29):

3. Ա. Աթենագորոս կամ Թէոդորոս Սալ-
հունի Հայոց քրիստոնէութեան առաջին նահա-
տակներից մէկն է (տ. Ալիշան, Յուշիկք Հայ-
քենեաց). Նորա նահատակութեան տեղը մինչեւ
այժմ ուխտատեղի է Համբարձման օրը և ուամ-
կօրէն կոչւում է Սբրեխլը Ս. Թորոս. այդ է Գո-
ռոռու վանքը, որտեղ կանգուն է մի նուիրա-
կան հին կաղնի. վանքի շրջակայքումն էն Սու-
րէնաշէն քաղաքի և Պարթենից դղեակի աւե-
րակները:

4. Վարդանի աշխարհացոյցի մէջ ասուած
է. «Անդ կայ Հաւահալանի թուըն Տրդատայ,
զոր ետ նմա կոստանդիանոս թագաւորն. և
յորժամ լննդիր արար Տրդատ թագաւորն Լու-
սաւորչին և գնացեալ եգիտ ի լեառն Սեպոհ. և
նա ասաց նմա զջնջումն ազգին Արշակու-

նեաց. և առեալ դժուքն օձեաց ուսպէս դժաւչ
և ետ ի յօդն բանիւն Աստուծոյ, և ասաց թէ
յելանելն արիական ազգին որ Են Փռանկք, եւ
ըեի նշանո այս, զոր առեալ շրջեցուցանեն ընդ
ինքեանս. և ինքն վերափոխեցաւ առ Աստուծ
• • • Յետոյ Պլուզ վարդապետն Յովհաննէս շըր-
ջեցաւ ի տեղին և ել ի գլուխ լերինն, զոր
այժմ Գոհամնամք ասեն Սեպուհոյ ծայրին, եւ
տես զգալի աչօք զնշանն զայն և համբուրեաց
և ասաց զԼուսաւորչն Անձինքն և զԼերինքն
ի վերայ նորա ևայլն (տ. Աշխարհացոյց Վար-
դանայ վարդապետին, հրատ. Սէն Մարտէնի,
Փարիզ 1879): Հաւհալի, այլ կերպ հաւհաւ-
լանի, Հաւլունի թրի աւանդութիւնը կայ և
այժմեան ժողովրդի մէջ (տ. Սրուանձտեան, Թու-
րոս Աղբար):

5. Աղնցիք, թերեւս նոյնն է ինչ որ հին
Բարձր Հայքի Աղիւն (Առիւծ) գաւառի անունը
(տ. Սիւքըի):

6. Գայլ գետոյ երկիր ըստ Սրուանձտեանի
այժմ ազնատւած հնչմամբ առւում է Գէլ-
քիւտ (տ. Թորոս Աղբ.):

7. «Դրուց աշխարհ» կոչում էր Վանան-
դու թագաւորութիւնը (տ. Մատթ. Ուռհա-
յեցոյ պատմ.). Դրունք և Դորոնք անունները
միւնոյն տեղում ունին, անշուշտ, մի սերտ ա-

ունչութիւն իրաք հետ և կապուած են Դրուց
կոչման հետ։ Դրունք լեռների զարդն է հա-
մասվիւու ծաղիկը, որ Դաւիթ Սալածուեցին յի-
շում է ծաղիկների գովասանութեան մէջ (տես
Նոր ժողովածու, Բ. պըակ, 17)։

8. «Աերուածք և կեր» բառերը տարօրիւ-
նակ գարձուածներ են, որոնցով որոշում է
Օսմանեան կուսակալի իշխանութեան և կարո-
ղութեան սահմանը։ Տէր Յակոբի նկարագրու-
թիւնից երեսում է, որ Փէ, դարում Օսմանեան
փաշան անսահման իշխանութիւն ուներ և կու-
սակալութիւնը նորան յանձնուած էր ուտելու
համար։ այսպէս՝ կերուածք, կեր բառերը հոռ-
մանիշ են լիճաւկ և թեմ բառերին անհաշիւ-
օգտուելու իմաստով։ «Արզուած նստող փաշա-
յին կերուածքն» «իշխող է սա մինչև և Բալու-
Համթայ փաշային կերն, դէպի արեմուտք մինչ
ի թոխաթ և և Սելաստիոյ փաշային կերուածքն,
և և հիւսիսոյ կողմն մինչ և Տրավիզոն և Ալբ-
յոնյ փաշային կերուածքն» ևայն։

9. Ուռու անունն Հայոց և Տաճիկ լեզու-
ների աղքեցութեան տակ տէր Յակոբի հնչմամբ
գառել է (Ու)ուռու, ինչպէս Հոռոմ (ըում կամ
ըումի) գառել է Ուռում։ այդպէս է և արդի
ժողովրդական արտասանութիւնն Ուռու անուան-
սակայն անբացատրելի է մնում այն թէ ինչու

մի քանի տեղեր (զոր որ Աշտարիանում) այդ անուան մէջ մտել է առ հնչիւնը, նուս, նուուսաց, նուսի՛:

10. Թուն կանատիկոյ է Գենետիկու հասարակապետութեան գանհերէցի պատուանունը դօժ (ՃԱԽ). Դաշանց թղթի մէջ դաւճիճակական ձևն է դուքս բառի, որից մակարէցէլու է արական դաւն, դօն:

11. Տէր Յակովը իւր յիշատակարանում սովոր է առանձին տեսակ չափ գործ գնել, որ հասկանալի է միմիայն եկեղեցական մարդու: Արզուամի ըերդի մեծութիւնը որոշելիւ համար նա առում է «մեծութիւն» նորա երկու կանոն սաղմոսիւ կուշը ջապատի» (այլ տեղ մի «վառք ու դժուարի») այդ մի մօտաւոր չափի է. Արզուամի ըերդի շըջագիծը այնքան է, որքան տեսում է ութ կանոն սաղմոսներից երկուսի առելը. ու ըեմն, եթէ ըերդի շըջապատի մի որոշ կետից ոկտելով ուղղմուր, շաղուանակ գնալու լինինք, մինչև կրկին նոյն աւելը գառնալնեսս կարող կը լինինք աւարտել երկու կանոն սաղմոս:

12. Օտմանցւոց և Պարսից մէջ տեղի ունեցած այս զինուարական պայքարը, որի երեսից երկու կողմի հայ և օտարագգի ընտելիչներ ծանր նեղութիւններ կը եցին, տես 1586 թուից մինչև 1640 թ, երբ երեմնամեայ զինագագար

հաստատուեցաւ։ այդ ժամանակամիջոցի եղեւ լութիւնները մանրամասն նկարագրել է իւր պատմութեան մէջ Առաքել վ։ Դաւըլիթեցին, որ ժամանակակից է աէս Յակոբին։

13. Գոհանամ լեառն, որ յիշուածէ նուղալարի հետ, աարբեր է Սեպուհի դադաթից, որ ընկնաւմ է գէպի արեմուտք Երդնկայի մօաև որի վերայ է Ս. Խուսաւորչի ճգնարանն Մանեայ Այրը։

14. Արզոււմի մօանշանաւոր հայաբնակ գիւղերից մէկն է Կան, որի մօան է Մուտուրկայ վանը (ըստ աէր Յակոբի Մուտուրկու)։ վանքի և գիւղի յարաբերութիւններից կազմուել է ժողովրդական առածք, որ Արզոււմից տարածուել է և ուրիշ տեղեր, «Կան կընսուի, Մուտուրկան կըհաչէ»։

15. Անշուշտ խօսքը Ծաղկէ (Ծաղկեայ) սարե մասին է, որ է Ալադաղ, ըստ աէր Յակոբի Ծաղկաւէտ լեառն։

16. Սոյ կաթուղիկոսն Յովհաննէս Թէկուրանցի (1485 — 1525թ.) ըացի իւր տաղերից ոտանաւոր է դարձուցել Արարածոց գիրքը, որի մասին է և աէր Յակոբի խօսքը (տ. Յովհ. Թէկ. և իւր տաղերը, Թիֆլիս 1892)։

17. Տ. Փելիպպոս կաթուղիկոսի ուղեորութիւնը աեղի ունեցաւ 1651—1653 թուին, երբ

նա ու էջմիածնից անցաւ Արզրում և ու Երուսաղէմ, և Կ. Պօլսի վերայով դարձաւ իւր աժոհութ:

18. Բինգեօլ կամ Հաղար Ակունքը ըստ տէր Յակոբի, և ըստ արդի գործածութեան Բիւրակն կամ Բիւրակնեան լեռներ, Բարձր Հայոց գեղեցիկ մասերից մէկն է. այդ սարերի մէջ է Սըրմանց կամ Սերմանց (հին Առոս, Աբոս) գագաթը, որ ունի 10500' բարձրութիւն: Այդ լեռները սիրելի են խաչնարած ժողովրդին և հարուստ նիւթ են տուել բանաստեղծութեանը (տ. Սըրւանձտեանի «Համով Հոտով», և «Գրոց Բրոց» առաեւ Բինգեօլի կոչուած ժողովրդական երդերն Հայոց աշուղների բերանում մեծ մասամբ թուլքերէն լեզուով):



ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

- Աբրահամ 58•
Ագրակ 17, 51•
Աղալս 28•
Աղատմայրի 19•
Ա. Աթենադորոս 11, 63.
Ալանաց դռւոն 19•
Ալաշկերտ 21, 25, 46, 48•
Ալիցիսայ 25, 28•
Ալորան 50•
Ակամոսիս 63.
Ակն 14, 48.
Ազմաղալա 50.
Ազնցիքը 14, 64.
Ազիւն 63, 64.
Ամիթ 25, 49.
Այրարատեան 50•
Անի 22, 33, 50.
Անկեղտուն 22.
- Աշխարհ 14•
Աշխէն 12•
Ապահովնեաց 23•
Ապտէհէրու ձոր 48•
Առիւժ 63, 64.
Առնառուտ 27, 28, 32•
Ասորեստան 29•
Ասորոց երկ 49•
Աստապատ 50•
Ա. Աստուածածնի լը
10, 20•
Արագ 19, 20, 24, 50•
Արապ 49•
Արապիստան 28•
Արասկեր 14, 48.
Արգլին 51•
Ա. Արիստակէս 11•
Արծիկ 23.

- Արժըռունեաց 22. Գլակայ վ. 24.
Արմտաներ 14. Գնջան 25.
Արշակ 43. Գոհանսամ լ. 13.
Արտազ 49. Գոռողու լ. 63.
Աւագ վանք 13. Ո. Գրիգոր Առևարո-
Աւգունտ 62. րիչ 11, 12, 13,
Աւետեաց խաչ 46, 47. 20, 43, 48, 54,
 63, 64.
Բարելոն 49.
Բարերդ 15, 51. Դարսանազեաց 12.
Բագառիճ 11, 47. Դարբանտ 50.
Բալու 10, 25, 48. Ո. Դաւիթ Եկ. 11.
Բաղդատ 28, 32, 49. Դաւիթ Անյաղթ 9, 60.
Բամբակաձոր 33. Դերջան 10, 44, 47.
Բասեն 18, 19, 20, 24, 50. Դիստին 21, 48.
Բասրայ 49. Դլատ 49.
Բասրայ Բանտար 28. Դորոնք 19, 64.
Բինդեօլ 24, 50. Դուլին 50.
Բիւղանգիա 31. Դրունք 20, 64.
Բորաձուկ 48. **Եպաման** 28.
Քաղաքառիճ 47. Եղիպտոս 28.
Քայլք 14, 52, 63. Եղնկայ 11, 12, 47.
Քառնիկ 20. Եղը կաթ. 22.
Քէորդ 55, 60. Եկեղեաց գ. 16, 63.
Քինք 24. Երասլս տ. Արտազ.

- Երևան 22, 28, 33,
34, 50.
- Եվլուստ 11, 12, 21,
23, 46, 47, 49,
53, 63.
- Ջարափիլսանայ 20.
- Զիւլին 20.
- Զուռնայ քերդ 49.
- Աջմիշտին 44, 60.
- Լոսկեր տ. Սպիկը.
- Ա. Պատէսս առ. 13.
- Թաթարիստան 28.
- Թարգման 20.
- Թարզէզ 34.
- Թաքման 24, 50.
- Թէոդոս 9, 44.
- Թէոդուլօլիս 9, 43.
- Թէկուրանցի 46.
- Թոխաթ 25, 35.
- Թորգման 13, 20.
- Թորթում 17, 51.
- Ա. Թորոս Սբորիսլու 63.
- Թօն դ. 28.
- Թօնուս 28.
- Իշխան 17, 51.
- Իշխանանիստ ձոր 17.
- Լակղի 9, 24, 47, 56, 58.
- Լեհ 28.
- Ա. Լուսաւորչել 42.
- Լոռի 33.
- Ա. Մադ 10.
- Խալի ետզի 21.
- Խալու դ. 17.
- Խալստիք 15.
- Խամուր 21.
- Խաչատուր Կեչառեցի 20.
- Խաչափայտի Լ. 47.
- Խաթերդ 48.
- Խլաթ 23.
- Խնուս 23, 33, 48.
- Խոյ 23.
- Խոսքովիդուխտ 12.
- Խոսքով փաշայ 32.
- Խոտեջուր դ. 16.

- Խորանառ 20.
Խորձունեաց ձոր 10, 47.
Խորվիրապ 11.

Յաղկաւէտ լ. 46.
Ծանախ 15,
Ծիրանայ ձոր 47.

Կյազզուան 20, 25,
50, 54.
Կամախ 14, 42.
Կան 58.
Կասրիական ծով 19.
Ո. Կարստետ վ. 10,
11, 12, 22, 40.
Կարին 44, 46, 47,
53, 61, 63.
Կարմիր վ. 45.
Կարմրի 14, 32.
Կարս 21, 25, 33,
50, 54.
Կաֆայ 28.
Կեղի 16, 24, 25, 47, 56.
Կեսարիա 43.
Կէչվան 20.
Կիւան 12.
- Կիրակոս 12, 45.
Կիւմուշանայ 15.
Կլայ 48.
Կոժեր 47.
Կողոնիայ 12.
Կովկաս 19.
Կուկվանց 14, 15.
Կուը 50.
Կըիտէս 27.

Հագարացիք 18, 28.
Հաղար Ալունք 50.
Համասիլիւռ ծ. 20.
Համիթ ո. Ամիթ.
Հայք, Վերին 9, 62.
Հանգստուն 10.
Հաշտէն 49.
Հապաշտան 28.
Հասանովայ 14.
Հասան Դալա 19.
Հաւահալի թուր 13,
63, 64.
Հելլայ 49.
Հնդկաց ծ. 28, 49.
Հնձուց վ. 43, 47.
Ո. Հոկիսիմեանք 45.

- Դադար եալ. 42.
Դարա եազի 21.
Դարայսար տ. Աեսա-
րիա:
Դարլպաշ 33.
Դաջան 10, 57.
Դուռուչայ 14.

Ճրագ գ. 47.
Ճնիվ 47.
Ճորոխ 15, 31, 63.

Մագլուտրոս 20.
Մալաթիա 48.
Մակու 22.
Մահմէտ 18, 52, 54.
Մաղաքիա 53.
Մաճարք 28.
Մամբվան 18.
Մանազկերտ 22, 48.
Մանանազի 63.
Մանգակունիք 24.
Ս. Մանի կոյս 13.
Մասիս լ. 21, 22, 50.
Մաստարայ 51.
Մատինա 28.

Մաքար 28.
Ս. Մեսրոպ 9.
Մզուք 63.
Մէժէնկերտ 20.
Միաբան ս. Աստուա-
ծածին եկ. 51, 60.
Մինաս Քացախ 12.
Միջագետք 49.
Մոկք 28.
Մոլոչ Խոր. 9, 43,
46, 60, 62.
Մոլոչ Գ. Կաթ. 34.
Մուխայ 28.
Մուշ 25, 33.
Մուսուլ 49.
Մուստաֆայ 32, 33.
Մուտուուկու 42.
Մուրատ 23, 32, 48.
Մուրատ Ղալասի 52.
Մուրթաղայ 56, 58.

Յակոբ 9, 60, 62.
Յապաղա 22.
Յանիկ 22.
Յոհան Օձնեցի 22.
Յովհաննուլանք 16, 51.

Յուլիան Ոսկեթերան 62.
Յովհ. Պլուղ 13, 64.

Աերոէս Մեծն 11, 43.
Նիկոս 14, 52.

Շահրապուլ 29.
Նազդամք 63.
Նամախի 50.
Նամատաւն 28.
Նապան 57, 58.
Նատ 49.
Նեպ Դարահիսար 12.
Նէռիյան 14.
Նիրակլան 28.
Նիրվան 50.
Նողենուձոր 47.
Նուզարար 50.

Ողկ 12.
Ողկան 48.
Ս. Ոսկեանք 46.
Ովաճուղ 47.
Ովկիանոս 49.
Ուկիթ 18.
Ուռուս 27.

Ջարեհօր 23.
Զարտախլուլ 12.
Զլաթ 28.
Զմշկայ գլ. 48.
Զոպանի կամուքը 50.
Զորմաքի 51.
Զօրու 33.

Պաղտամ տ. Բաղ-
դատ.
Պայազիտ 21.
Պաշխազուլին 28.
Պարթենից դդ. 63.
Պարմազորդ 56, 58.
Պարտէզ 31. (11.)
Պղնձագոյն անապատ
Պոնտոս 15, 22.


Պազայիր 28.
Զաֆար 18.
Զերմուլ 47.
Զուլամերի 28.
Զուզայ 50.

Ս. Ասհալ 9.
Սահունի 63.

- Սալմաստ 28.
Սանոս Զէլէպի 28,
32, 34.
Սառչամ 47.
Սարգիս վ. 42, 61.
Ս. Սարգիս եկ. 18.
Սեբաստիա 14, 25, 35.
Ս. Սեբի 23.
Սեպուհ 13, 63, 64.
Տ. Սերովը Եից վ. 14.
Սև ծով 15, 16, 22,
37, 52.
Ս. Սովի 17.
Սուհկաւէտ լ. 21.
Սուրէնաշէն 63.
Սուբիասեանք 21, 46.
Սպեր 16, 51, 63.
Սպիտակ ծով 49.
Ստամպօլ 13, 17, 18,
26, 28, 32, 33,
34, 47, 54.
Սողանլու 21.
Վաղարշակերտ 21.
Վանայ ծ. 25, 28, 33.
Վանատիկ 27.
- Վանի 35.
Վարդոյ դւ. 23.
Վարդպատրիկ 22, 53.
Վիշապաձոր 50.
Վոհ 63.
Վրաստանպօղաղ 46.
Վրաստան 28, 41.
Ջարօն 13, 15, 48.
Տիգրիս 49.
Տիւրկէ 14.
Տղայ Լուսաւորիչ 11.
Տրապիզոն 25.
Տրգատ 11, 12, 13,
32, 63.
Փանակ 51.
Փելիպպոս կաթ. 43,
46, 60.
Քէլքիւտ 64.
Քըդատան 29, 49.
Քոսատաղ 21.
Ոխտիք 19, 51.
Սուանկ 27, 64.
Տրգատ 48.



ՀՀ բնակչութեան հաշվառման աշխատանքները



Կ. ԿՈՍՏԱՆԵՑՆՅԻ ԵՐԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց,
Ա. Ա. Էննայ 1877.

Դիրք առաջնո՞ւ գրաբառ բնագիրը.
Դիրք երկրորդ՝ աշխարհաբառ թարգա-
մանութեանը (Բ. տպ. Թիֆլ. 1894),
Դիրք երրորդ՝ ժանօնթութիւններ.

Հայոց ներանոսական կրօնը, Վ. զրշալտ. 1879.
Ստեփանես Օրպելեան, Ազր և ո. Կաթուղիկէն,
Թիֆլիս 1885.

Հայոց վանելերը, Մասկով 1886.

Թովմայ Մեծափեցու Յիւստակարանը, Թիֆլ. 1892.
Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆ. 1892
Նոր ժողովածու, Միջնագարեան Հայոց տաղեր և
ոտանաւորներ.

Ա. պրակէ, Թիֆլիս, 1892.

Բ. պրակէ, Թիֆլիս, 1892.

Գ. պրակէ, Թիֆլիս, 1896.

Համամ Արեւելցի, Վ. աղարշապատ 1896.

Ս. Լուսաւորչի ազր, Վ. աղարշապատ 1896.

Տ. Պետրոս Ս. Դեւտագարձ, Վ. աղարշապատ 1897.

Գրիգորիս Աղբամարցին եւ իւր տաղերը, Թիֆ. 1898
Մկրտիչ Նաղաւ եւ իւր տաղերը, Վ. զրշալտ. 1898.

Գ Ե Ա Գ Ի Ք Ե Բ

Գրաբառի խոնարհումը, Թիֆլիս 1881.

Գրաբառի նոլավումը, Թիֆլիս 1881.

Ծաղկաբաղ արձակ եւ չափածոյ բանից, Յերեւ-
շրջանս, Թիֆլիս 1881.

Ծաղկաբաղ Ա. շրջան (Ք. տպագր.) Թիֆ. 1894.

Ծաղկաբաղ Բ. շրջան (Բ. տպագր.) Թիֆ. 1894.

Բառացուցակ Ա. Ժաղկագաղի Հայար, Թիֆ. 1885.

Եախառակիլ (Բ. տպագր.) Թիֆլիս 1893.





